

ISSN 1829-0523

ԽՈՐՀԱՆՈՒՄԱՆ ԲԱՆԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ Х.АБОВЯНА

ARMENIAN STATE PEDAGOGICAL
UNIVERSITY AFTER KH. ABOVYAN

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
НАУЧНЫЙ ВЕСТНИК
SCIENTIFIC BULLETIN
N 1 (48)

ԵՐԵՎԱՆ
ЕРЕВАН 2025 YEREVAN

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Խմբագրական խորհրդի նախագահ **Մարիամ Իսպիրյան** - Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ ispiryanmariam@aspu.am

Գլխավոր խմբագիր **Վլադիմիր Կարապետյան** - հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էլ. հասցե՝ vladimir.s.karapetyan@gmail.com, <https://orcid.org/0000-0001-7913-2556>

Գլխավոր խմբագրի տեղակալ **Աշոտ Գալստյան** - Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էլ. հասցե՝ galstyanashot42@aspu.am

Պատասխանատու քարտուղար **Մարիաննա Ամիրադյան** - Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
Էլ. հասցե՝ amiraghyan.80@mail.ru

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, «Գիտական տեղեկագիր», № 1 (48), Երևան 2025թ., 205 էջ

Կայք՝ <http://scientificnews.aspu.am/>

Համարի ձևավորումը և համակարգչային
շարվածքը՝ **Մ. Զ. Ավագյանի**
Էլ.հասցե՝ melinescientific@aspu.am

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

*Председатель
редакционного совета*

Мариам Испирян – Проректор по учебно-научной работе Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук, доцент
эл. адрес: ispiryanmariam@aspu.am

Главный редактор

Владимир Карапетыан - доктор психологических наук, профессор
эл. адрес: vladimir.s.karapetyan@gmail.com, <https://orcid.org/0000-0001-7913-2556>

Заместитель редактора

Ашот Галстян - Декан филологического факультета Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор филологических наук, профессор
эл. адрес: galstyanashot42@aspu.am

*Ответственный
секретарь*

Марианна Амирагян - Доцент Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна, кандидат педагогических наук
эл. адрес: amiraghyan.80@mail.ru

EDITORIAL BOARD

*Chairman of the Editorial
Board*

Mariam Ispiryan - Vice-rector for Science of Khachatur Abovian Armenian State Pedagogical University. PhD in Pedagogy. Associate Professor
e-mail: ispiryanmariam@aspu.am

Chief editor

Vladimir Karapetyan - Doctor of Psychology, Professor,
e-mail: vladimir.s.karapetyan@gmail.com, <https://orcid.org/0000-0001-7913-2556>

Deputy Editor

Ashot Galstyan - Dean of the Faculty of Philology of the Khachatur Abovian Armenian State Pedagogical University. Doctor of Philology, Professor,
e-mail: galstyanashot42@aspu.am

Responsible Secretary

Marianna Amiraghyan - Associate Professor of the Khachatur Abovian Armenian State Pedagogical University, PhD in Pedagogy. **e-mail:** amiraghyan.80@mail.ru

Responsible for computer dialing: M. Avagyn

e-mail: melinescientific@aspu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄՈՎՍԵՍ ՔՀՆ. (ԴԱՎԻԹ) ՍԱՀԱԿՅԱՆ. Դիտարկումներ «Ազաթանգեղոսի պատմության» գիտա-քննական բնագրի վերաբերյալ.....	10
ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ. Քաղաքական կայունության վրա ազդող հիմնական գործոնները ներկայիս պայմաններում.....	20
ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ. Վրաստան-Ռուսաստան հարաբերությունների աշխարհաքաղաքական պայքարը. Աբխազիայի և Հարավային Օսեթիայի օրինակը.....	34
ԱՆՆԱ ՍԻՍՈՅԱՆ. Քարոզչությունը պատերազմական շրջանում. Լաստուելի մոդելի վերլուծությունը հայ-ադրբեջանական տեղեկատվական պայքարի օրինակով.....	53
ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ. Ոստիկանության ինստիտուցիոնալ դերը սահմանադրական կարգի պահպանման գործում քաղաքացիական անհնազանդության պայմաններում.....	73

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

(ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ)

ԳՈՀԱՐ ՉԱԼԴՅԱՆ. Ուրվագծային քարտեզների կիրառման արդյունավետ փորձը աշխարհագրության ուսուցման գործընթացում.....	90
ԳԱԳԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ, ԱՐԱՔՍՅԱ ՄԿՐՏՉՅԱՆ. Ուշադրության բաշխումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում.....	103

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԼԱՐԻՍԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԱՐՏԱԿ ՀԵԲՈՅԱՆ, ԼԱԶԱՐ ԵՍԱՅԱՆ, ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ԱՐԱՄ ԲԱՅԿՈՎ, ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԼՈՒՍԻՆԵ ՇԱՐԻՄԱՆՅԱՆ. Գնահատման համակարգի արդիականացումը ԵՊԲՀ ստոմատոլոգիական ֆակուլտետում	119
---	-----

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԵԼԵՆԱ ՌՈՒԲԼԵՎՍԿԱՅԱ, ԵԼԵՆԱ ԳՈՐԲԱՏՈՎԱ. Գործնա-կողմնորոշիչ մոտեցումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագետների պատրաստման գործընթացում.....	138
--	-----

ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐԻ ՇԱԲՈՅԱՆ, ՆԱԶԵԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ. Ձայնի վերականգնում. լոգոպեդական աշխատանքի մոտեցումները հետադարձ նյարդի վնասման դեպքում.....155

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՄԱՐԻԱՆԱ ԱՄԻՐԱՂՅԱՆ. Կրթական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման սոցիալ-հոգեբանական արտացոլումները.....166

ՂԱԶԱՐԵԱՆ Մ.Ե. Հուզական ինտելեկտի առանձնահատկությունները լիբանանյան կրթական համակարգերում դասավանդող մանկավարժների մոտ.....174

ՏՐԱՆ ԴՈՒՅ ՏՈԱՆ, ԼԵ ՆՈՒ ՆՀՈՒ ՔՈՒՅՆՀ. Երաժշտական կրթության դերը երեխաների անհատականության ձևավորման և զարգացման գործում.....188

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

ИЕРЕЙ МОВСЕС (ДАВИД) СААКЯН. Замечания к научно-критическому тексту «Истории Агафангела».....	10
ТИГРАН КАЗАРЯН. Основные факторы, влияющие на политическую стабильность в современных условиях	20
КАРЕН КАЗАРЯН. Геополитические столкновения в отношениях Грузии и России: случай Абхазии и Южной Осетии	34
АННА СИСОЯН. Пропаганда во время военных действий. анализ модели Лассюэля на примере армяно азербайджанской информационной борьбы.....	53
ТИГРАН КАЗАРЯН. Институциональная роль полиции в обеспечении конституционного порядка в условиях гражданского неповиновения.....	73

ПЕДАГОГИКА **(МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ)**

ГООР ЧАЛХЯН. Применение контурных карт в процессе преподавания географии.....	90
ГАГИК ПОГОСЯН АРАКСЯ МКРТЧЯН. Распределение внимания в процессе обучения математике	103

ПРОФЕССИОНАЛЬНОЕ ОБРАЗОВАНИЕ

ЛАРИСА АВETИСЯН, АРТАК ГЕБОЯН, ЛАЗАРЬ ЕСАЯН, МАРИНА МАРКАРЯН, АРАМ БАЙКОВ, АННА АВETИСЯН, ЛУСИНЕ ШАРИМАНЫН. Модернизация системы оценивания на стоматологическом факультете ЕГМУ.....	119
--	-----

ДОШКОЛЬНОЕ ОБРАЗОВАНИЕ

ЕЛЕНА РУБЛЕВСКАЯ, ЕЛЕНА ГОРБАТОВА. Практико-ориентированный подход к процессу подготовки специалистов для учреждений дошкольного образования.....	138
--	-----

СПЕЦИАЛЬНАЯ ПЕДАГОГИКА

МЕРИ ШАБОЯН, НАЗЕЛИ АВETИСЯН. Восстановление голоса: логопедические подходы при повреждении возвратного нерва	155
--	-----

ПСИХОЛОГИЯ

ВЛАДИМИР КАРАПЕТЯН, МАРИАННА АМИРАГЯН. Социально-психологические размышления эффективного использования образовательных технологий	166
КАЗАРЕАН М. Е. Особенности эмоционального интеллекта педагогов преподающих в системах образования Ливана	174
ТРАН ЗУЙ ТОАН, ЛЕ НУ НХУ КУИНЬ. Роль музыкального образования в формировании и развитии личности детей.....	188

CONTENTS

HISTORY

FR. MOVSES (DAVIT) SAHAKYAN. Notes on the scholarly-critical text of "Agathangelos' history".....	10
TIGRAN GHAZARYAN. The main factors affecting political stability in the current conditions.....	20
KAREN GHAZARYAN. Geopolitical struggles in the Georgia-Russia relationship: the case of Abkhazia and South Ossetia	34
ANNA SISOYAN. Propaganda in war times: analysis of Lassuelle's model on the example of the Armenian-Azerban information struggle	53
TIGRAN GHAZARYAN. The institutional role of the police in maintaining constitutional order in conditions of civil disobedience.....	73

PEDAGOGY

(TEACHING METHODOLOGY)

GOHAR CHALGHYAN. Application of sketch maps for teaching geography.....	90
GAGIK POGHOSYAN ARAKSIA MKRTCHYAN. Distribution of attention in the process of teaching mathematics	103

PROFESSIONAL EDUCATION

LARISA AVETISYAN, ARTAK HEBOYAN, LAZAR YESSAYAN, MARINA MARKARYAN, ARAM BAYKOV, ANNA AVETISYAN, LUSINE SHARIMANYAN. Modernization of the assessment system at the YSMU faculty of stomatology.....	119
---	-----

PRESCHOOL PEDAGOGY

ELENA RUBLEVSKAYA, ELENA GORBATOVA. Practice-oriented approach to the process of training specialists for preschool educational institutions.....	138
--	-----

SPECIAL EDUCATION

MERI SHABOYAN, NAZELI AVETISYAN. Voice rehabilitation: speech therapy approaches for recurrent nerve damage.....	155
---	-----

PSYCHOLOGY

VLADIMIR KARAPETYAN, MARIANNA AMIRAGHYAN. Social-psychological reflections of the effective use of educational technologies.....	166
GHAZARIAN M. Y. Characteristics of emotional intelligence of teachers in Lebanese pedagogical institutions	174
TRAN DUY TOAN, LE NU NHU QUYNH. The role of music education in the formation and development of children's personality	188

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԳԻՏԱ-ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄՈՎՍԵՍ ՔՀՆ. (ԴԱՎԻԹ) ՄԱՀԱԿՅԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Էլ. *hmail*՝ fr.movses@gmail.com

DOI: 10.24234/scientific.v1i48.191

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է քրիստոնեական վաղ շրջանի հայոց պատմությունն ու հայկական աստվածաբանական մտածողությունը ներկայացնող նշանավոր գրական կոթողներից մեկի՝ «Ագաթանգեղոսի Պատմության» ուսումնասիրությանը:

Հեղինակը ցույց է տալիս, որ «Ագաթանգեղոսի Պատմությունը», որն իրենից գրական անգնահատելի արժեք է ներկայացնում, այսօր հանրությանն է ներկայանում աստվածաբանական հակասություններ պարունակող դրվագներով, որոնցում տեղ գտած աստվածաբանական ձևակերպումները չեն ձուլվում երկի լեզվաոճական և աստվածաբանական ընդհանուր տրամաբանությանն ու մտածողությանը:

Խորը քննության ենթարկելով «Ագաթանգեղոսի Պատմության» գիտա-քննական բնագիրը, ինչպես նաև՝ հայերենով և օտար լեզուներով պահպանված այլ բնագրերն ու խմբագրությունները, հեղինակը եզրակացնում է, որ դրանցում առկա աստվածաբանական հակասություններն, ամենայն հավանականությամբ, ծնունդ են հետագայի խմբագրական միջամտությունների կամ ձեռագրերի անփույթ արտագրության, որով պայմանավորված՝ հրամայական է ստեղծվում վերականգնելու հիշյալ կոթողային աշխատության տրամաբանական ու աստվածաբանական ամբողջականությունն ու վավերականությունը, հարկ եղած դեպքում նաև նոր գիտա-քննական բնագիր կազմելու միջոցով:

Բանալի բառեր՝ Ագաթանգեղոս, բնագիր, ձեռագիր, տպագրություն, խմբագրություն, հակասություն, աստվածաբանություն, լեզու:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1909 թվականին Թիֆլիսում (Տփղիս) լույս է տեսել «Ագաթանգեղոսի պատմության» գիտա-քննական բնագիր, որը կազմվել է Գալուստ Տեր-Մկրտչյանի և Ստեփանոս Կանայանցի աշխատությամբ՝ 60 ձեռագրերի ուսումնասիրության հիման վրա: Հրատարակությունից կարճ ժամանակ անց, կատարված աշխատանքի հսկայական ծավալով և մանրակրկիտությամբ իր նմանը չունեցող այս աշխատությունը լայն տարածում

է գտել ուսումնարհիրողների շրջանակներում: Այն լինելով միակ քննական բնագիրը՝ օգտագործվել է ոչ միայն անվանի հայագետների կողմից կատարված ուսումնասիրությունների շրջանակներում, այլև իբրև բնօրինակ է ընդունվել հետագա թարգմանությունների համար, իսկ 2003 թվականին վերահրատարակվել նաև հայագիտական շրջանակներում հայտնի «Մատենագիրք Հայոց» ժողովածուում:

Թեև ավելի քան մեկ հարյուրամյակ է անցել գիտա-քննական բնագրի հրատարակությունից՝ առ այսօր այն շարունակում է մեծ հեղինակություն վայելել ուսումնասիրողների շրջանակներում, քանի որ. «այս խմբագրական գլուխգործոցը ամենակարևոր հրապարակումն է Ազաթանգեղոսի պատմության հրատարակությունների մեջ» (Winkler, 1980):

Այնուամենայնիվ, կատարված այնպիսի ահռելի ու կարևոր աշխատանքի ընթացքում, ինչպիսին է սույն գիտա-քննական բնագրի կազմությունը, չէին կարող տեղ չգտնել նաև որոշ վրիպումներ, որոնց շարքին պիտի դասենք ստորև ներկայացված այն դրվագները, որոնք ոչ միայն չեն համապատասխանում ամբողջ երկում առկա հստակ աստվածաբանական մտքին, այլև, մեր կարծիքով, խաթարում են այն: Խոսքը գիտա-քննական բնագրի Է գլխում ներկայացված սբ. Գրիգոր Լուսավորչին վերագրվող բավականին ծավալուն աղոթքի 3 հատվածների և ԺԵ գլխում սբ. Հովսեփմեին վերագրվող աղոթքի մասին է, որոնք քննված են ստորև:

ՔՆՆԱԲԿՈՒՄ

Գիտա-քննական բնագրի Է գլխում ներկայացված սբ. Գրիգոր Լուսավորչին վերագրվող աղոթքի երեք խնդրահարույց տեղիներից առաջինը գետնեղված է § 85-87-ում.

«85 ... Սակայն պարտ է պատուել զնոսա, որչափ ի քէն է հրամայեալ, եւ ոչ զքեզ ընդ ահի մահկանացու մարդկան փոխանակել. զի տքա զմարմին եւ եթ կարող են չարչարել, իսկ Որդիդ միածին, Տէր մեր Յիսուս Քրիստոս, կարող է արկանել ի տանջանան յաւիտենից հասարակ, ողով եւ մարմնով հանդերձ, ի հուրն անշէջ եւ յորդնն անմահ:

86 Այլ, Տէր, տո՛ւր ինձ զաւրութիւն համբերութեան նեղութեան ցաւոց փոանգիս իմոյ, եւ ողորմեա՛ց ինձ իբրեւ ի վերայ աւագակին, որ ընդ քեզ էր կցորդ չարչարանաց խաչի քոյ. եւ արա՛ առ իս զգոյթ մարդասէր շնորհաց քոց, որով կեայ ամենայն երկիր առ հասարակ, արդարք եւ մեղաւորք, վասն ներելոյ քաղցրութեան քոյ. զի «ծագես զարեգակն քո ի վերայ չարաց եւ բարեաց, եւ ածես զանձրեւ ի վերայ արդարոց եւ մեղաւորաց» (Խմնտ. Մատթ. Ե 45). զի պահես զբարկութիւն քո, եւ ցուցանես զողորմութիւն քո առ ամենայն մարդիկ առ հասարակ:

87 Տո՛ւր ինձ, Տէր, շնորհս համբերութեան դառն տանջանացս՝ որով կոտեն զիս. զի եւ ես արժանի եղէց պահել զաւանդութիւն յուսաւորութեան հաւատոցս, զոր ետուր ինձ՝ ճանաչել զքեզ եւ առնել զկամս քո: Չի մի՛ ամաչեացեն յուսացեալքն ի քեզ, որոց միանգամ պարծեցեալ են ի

միաձին Որդիդ քո ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ի քէնդ առաքեցաւ. զոր դու առաքեցեր ի մահ վասն մեղաց մերոց...» (Ագաթանգեղոս, 2003):

§ 85-ից երևում է, որ հեղինակը իր խոսքն ուղղում է Հայր Աստծուն, քանի որ ասում է «քո միաձին Որդին», «...իսկ Որդիդ միաձին Տէր մեր Յիսուս Քրիստոս»: § 86-ում նա շարունակելով իր խոսքը՝ նշում է, որ այդ Տերը, ում նա դիմում է, խաչված է եղել. «Այլ, Տէր ... ողորմեա՛ց ինձ իբրեւ ի վերայ աւագակին, որ *ընդ քեզ էր կցորդ չարչարանաց խաչի քո*»: Ստացվում է, որ ըստ § 85-86 տրամաբանության հեղինակը Միաձին Հորը՝ Հայր Աստծուն է համարում խաչված, ինչը հակասում է երկու առկա աստվածաբանական տրամաբանությանը, համաձայն որի՝ խաչվողը միաձին Որդին է, այլ ոչ թե նրա Հայրը: Օրինակ, նույն աղոթքի § 85-ում հստակ երևում է, որ նույն Աստվածը լինելով հանդերձ՝ տարբեր են Խաչվածը (Միաձին Որդին) և նրա Հայրը.

«80 Որ առաքեցեր զմիաձին Որդիդ քո յաշխարհ, լոյս ի լուսոյ, կեանք ի կենաց, որ եկն զգեճու՛ղ զմեր նմանութիւնս մարմնոյ ի կուսէ անտի, զի զմեզ անդրէն առ Աստուածութիւնն յարեացէ իւրով նմանութեամբն, որ իբրեւ զմեզն եղեւ: Ծնաւ ի կուսէն մարմնով եւ մարդացաւ եւ մարմնացաւ իբրեւ զմեզ, այլ կայ եւ մնայ ի փառս Աստուածութեան իւրոյ. եւ ոչ ընկալաւ փոփոխումն յԱստուածութենէ իւրմէ. այլ նոյն է՝ որ էրն եւ է եւ կայ եւ մնայ յաւիտեան ընդ Հաւր եւ ընդ սուրբ Հոգոյն: Այլ զի սիրեաց զմարդիկ՝ վասն այնորիկ եղեւ իբրեւ զմեզ, զի զմեզ ածցէ յառաւելութիւն զշնորհաւք Աստուածութեան իւրոյ, որ եւ կամք ծնողին իւրոյ. եւ կատարեաց զկամս նորա. որ զսուրբս իւրով փառաւորեաց համբերութեամբն, ի կրել իւրում զանարգութիւն վշտաց մահու տանջանաց, մահուամբն եւ թաղմամբն հանդերձ. որ վասն զի սիրեցին մարդիկ պաշտել զպատկերս մարդաղէմս փայտագործս ճարտարագործս հիւսանց՝ եղեւ ինքն պատկեր մարդկան, զի զպատկերագործսն եւ զպատկերասէլսն եւ զպատկերապաշտսն յիւր պատկեր Աստուածութեանն հնազանդեցուցէ» (Ագաթանգեղոս, 2003):

Ընդորոմ, հետաքրքիր է նաև այն, որ § 85-86-ում առկա այս շփոթը ոչ միայն հակասում է ողջ երկում առկա աստվածաբանական տրամաբանությանը, քանի որ Հայր Աստծուն ներկայացնում է իբրև Խաչվածի, այլ նաև՝ հակասում է հենց այս փոքր դրվագի տրամաբանությանը, քանի որ հաջորդող համարում՝ § 87-ում, այս Տերը, որը խաչվել էր ըստ § 86-ի, ուղարկում է նաև իր Որդուն՝ խաչի մահվան. «... ի միաձին Որդիդ քո ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ի քէնդ առաքեցաւ. զոր դու առաքեցեր ի մահ»: Ընդհանուր առմամբ, ըստ § 85-87-ի տրամաբանության, ստացվում է, որ Միաձին Հայրը և՛ ինքն է չարչարվել խաչի վրա (§ 86) և՛ իր Որդուն ուղարկել մահվան (§ 87):

Այս ողջ շփոթը առաջանում է § 86-ում առկա *«որ ընդ քեզ էր կցորդ չարչարանաց խաչի քո»* հատվածի պատճառով, որը և Հայր Աստծուն դարձնում է խաչված, սակայն, կազմված գիտա-քննական բնագրի տարրնթերցումներում երևում է, որ ՄՄ թիվ 1912, թիվ 1479 և թիվ 1859 ձեռագրերում § 86-ի խնդրահարույց *«ընդ քեզ էր կցորդ չարչարանաց խաչի քո»*

հատվածը այլ կերպ է շարադրված. «*ընդ միածնիդ քո էր եւ կցորդ էր չարչարանաց*» (Ագաթանգեղոս, 2003):

Եթե այս երեք բնագրերում առկա տարբերակը ավելի հավաստի է, § 85-87-ում առկա խնդիրն ինքրստինքյան վերանում է. ոչ թե Միածնի Հայրն է չարչարվում խաչի վրա (ընդ քեզ էր կցորդ), ում և ուղղված է խոսքը, այլ՝ Նրա Միածին Որդին (ընդ միածնիդ քո էր եւ կցորդ էր):

Այս երեք ձեռագրերը գիտա-քննական բնագրի կազմողների կողմից ուսումնասիրված 60 ձեռգրերից ոչ միայն հնագույններից են, այլ նաև իրենց իսկ վկայությամբ՝ կարևորագույններից. «*d-ն (= ՄՄ 1859 - Մ.Մ.) մեր լուսագոյն և հագուագիւտ Ձ-երից մէկն է: Ամբողջ գործի ընթացքում ծայրէ ծայր իւր ընթերցուածներով միանում է a-ի (= ՄՄ 1479 - Մ.Մ.) հետ. բայց a-ից (ուրեմն և c-ից) անկախ է, որով և a-ի հետ հաւասարարժէք մի Ձ-իր*» (Ագաթանգեղոս, 1909):

Ստացվում է, որ եթե Գ. Տեր-Մկրտչյանը և Ս. Կանայանը «Ագաթանգեղեայ պատմութիւն» երկի իրենց կազմած գիտա-քննական բնագրի իբրև հիմք ընտրեին ՄՄ թիվ 1912, թիվ 1479 և թիվ 1859 ձեռագրերից որևէ մեկը, և դրա վրա կառուցեին քննական բնագիրը՝ խնդրո առարկա այս և հաջորդող 3 դրվագներում աստվածաբանական հակասությունների խնդիրը կարող էր ամենևին էլ չլինել: Մինչդեռ գիտա-քննական բնագրի հիմքում դրվել է ոչ թե 60 ձեռագրերից լավագույնը, այլ մինչ այդ առկա 5 տպագրություններից «լավագույն տպագրության» արտատպությունը, որը, ուղղակի, այդ ժամանակ ավելի մատչելի էր և տարածված. «*Մեր հրատարակութեան մէջ t-ն է հիմք առնուած ... Այս տպագիրն ընտրեցինք մենք մեր համեմատութեան համար, նշանակելով t տառով, որովհետև մատչելի և համեմատաբար շատ տարածուած է ռուսահայերիս մէջ*» (Ագաթանգեղոս, 1909): Ընդորում՝ հերթականությամբ 5-րդ այս տպագրությունը (Թիֆլիս, 1883), որը դրվել է գիտա-քննական բնագրի հիմքում, «զոկ արտատպութիւն է չորրորդ տպագրից» (Վենետիկ, 1862), որն էլ «զոկ արտատպութիւն է երրորդ տպագրից» (Վենետիկ, 1835) (Ագաթանգեղոս, 1909):

Գիտա-քննական բնագրի Է գլխում ներկայացված սբ. Գրիգոր Լուսավորչին վերագրվող աղոթքի երկրորդ խնդրահարույց տեղին գետեղված է § 93-94-ում.

«93 ... *զի եւ ես արժանի եղէց վերանալ ընդ առաջ Որդւոյ քոյ սիրելոյ. յորժամ յափշտակեցէ զանձկացեալսն իւր ի ճառագայթ լուսոյ իւրոյ, դատել ճշմարտութեամբ զամենայն տիեզերս հրով բարկութեամբ իւրով:*

94 *Այլ այժմիկ, Տէր, զաւրացո՛ղ զծառայս քո փասն անուան քոյ, զի յաղթեսցուք զաւրութեանց թշնամոյն. եւ բա՛րձ եւ փարատեա՛ զմէզ չարութեան կռապաշտութեան հեթանոսութեան քաղցրութեամբ սիրով քով առ արարածս քո. որ եղեր զանձն քո ի վերայ խաշանց քոց, մի՛ թողուր զհաւտ քո, զի ածցես յողորմութիւն. որ դու միայն կարող ես թողուլ զմեղս, եւ քաւել զյանցանս եւ*

զանադէնութիւնս քոյոց արարածոց, զի զքեզ միայն պաշտեցեն եւ զկանս քո արասցեն, եւ յիցին փառաւորիչք Աստուածութեանդ քոյ ...» (Ագաթանգեղոս, 2003):

§ 93-ից երևում է, որ խոսքը կրկին ուղղված է Հայր Աստծուն, քանի որ մատնանշվում է վերջինիս Որդի ունենալու հանգամանքը. «*ընդ առաջ Որդոյ քոյ*»: Ըստ § 94-ի աղոթքի հասցեատերը (Հայրը) ինքն իրեն գոհաբերել է՝ իր արարածների համար. «*որ եղեր զանձն քո ի վերայ խաշանց քոց*»:

Սակայն, ՄՄ վերոհիշյալ երեք ձեռագրերի § 94-ում տվյալ խնդրահարույց հատվածի ենթական ոչ թե Հայրն է (որ եղեր զանձն քո), այլ՝ Որդին. «*որդոյ քո, որ եղ զանձն իւր*» (Ագաթանգեղոս, 2003), որով կրկին աստվածաբանական շփոթը վերանում է:

Սբ. Գրիգոր Լուսավորչին վերագրվող աղոթքի վերջին խնդրահարույց տեղին գտնվում է § 96-97-ում.

«96 Այլ որ առատանասդ ամենեցուն՝ տո՛ւր մեզ, զի լիցուք վկայք Աստուածութեանդ քոյ, չարչարել փասն անուան քոյ, եւ մեռանել փասն ճշմարտութեան քոյ, եւ նորոգել միւսանգամ ի գալստեան քոյ, զի դու եկիր եւ մեռար ի վերայ արարածոց քոց, եւ խառնեցեր զմահկանացու բնութիւնս մեր յանմահութիւն քո: Վասն այսորիկ եւ մեք մինչեւ ի մահ լիցուք վկայք կենդանութեան քոյ, զի խառնեցուք ի թիւ վկայից քոց ... զի մատուցուք զանձինս մեր պատարագ Աստուածութեան քում. զի կորուցուք զանձինս, եւ դարձեալ գտցուք զնա յաւուր յարութեան. կացցուք ընդ աշմէ քումմէ զանմեղութիւն զգեցեալ ընդ գառինս աջակողմեան դասուն, կամարարաց քոց, յուրախութիւն սրբոց քոց, որ սիրեցին զԱստուածութիւն քո եւ զմիածին Որդիդ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս. որ եղեւ գառն ճշմարիտ եւ մատոյց զանձն իւր քեզ պատարագ փասն մեղաց ամենայն աշխարհի, զի լիցի հաճեցուցիչ եւ բարեխաւս ընդ արարիչդ եւ ընդ արարածս: Իսկ որ յայս հաճութիւն ընթացեալ մերձեցան՝ պատրաստեաց նոցա աթելվանս յարքայութեան Աստուածութեանն իւրոյ: ⁴⁹Իսկ որք ոչն կամեցան մոռանել ի հաճութիւն հնազանդութեան գալստեան նորա՝ յախտենից տանջանս խոստացաւ:

97 Եւ արդ՝ Տէր բարերար, որ եկիր եւ խոնարհեցար եւ առեր զկերպարանս մարդկան, եւ ետուր զանձն քո ամենայն համբերութեան ... » (Ագաթանգեղոս, 2003):

Այստեղ՝ § 96-ի սկզբում, խոսելով Տիրոջ մասին, ասվում է, որ նա եկավ, մահացավ Իր արարածների համար՝ խառնելով մարդկային մահկանացու բնությունն Իր անմահությանը: Նույն § 96-ի շարունակությունից, սակայն, պարզվում է, որ այս բոլոր խոսքերը նորից ուղղված են Հորը. «*Որ սիրեցին զԱստուածութիւն քո եւ զմիածին Որդիդ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս. որ եղեւ գառն ճշմարիտ եւ մատոյց զանձն իւր քեզ*»:

ՄՄ վերոհիշյալ երեք ձեռագրերում պատկերն այլ է: Այս երեքում § 96-ի սկզբում գրված է ոչ թե «*տո՛ւր մեզ, զի լիցուք վկայք Աստուածութեանդ քոյ*», այլ՝ «*տուր մեզ տէր միածին որդիդ աստուծոյ շնորհս ի հոգւոյդ սրբոյ*» (Ագաթանգեղոս, 2003), որով § 96-ից սկսյալ աղոթքի հասցեատերը դառնում է Որդին: Հատվածի շարունակության մեջ բացակայում է «*եւ*

զմիածին Որդիդ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս» խնդրահարույց հատվածը, որով ստացվում է. «որ սիրեցին զԱստուածութիւն քո, որ եղեր զառն ճշմարիտ եւ մատուցեր զանձն պատարագ հար» (Ագաթանգեղոս, 2003): Հաջորդող բայերն էլ դրված են ոչ թե երրորդ դեմքով, ինչպես գիտա-քննական բնագրի պարագային է, այլ՝ երկրորդ, որով ցույց են տալիս, որ այս ողջ § 96-ում խոսքը Որդուն է ուղղված, ինչն ավելի համահունչ է նույն գիտա-քննական բնագրի § 97-ի հետ (Ագաթանգեղոս, 2003): Հակառակ դեպքում անհասկանալի է, թե ինչու է գիտա-քննական բնագրում § 96-ը ուղղված Հորը, իսկ § 97-ից սկսյալ մինչև աղոթքի վերջ խոսքը ուղղվում Որդուն:

Հիշյալ երեք ձեռագրերում պահպանված տարբերակը ոչ միայն ավելի տրամաբանական է աստվածաբանական տեսանկյունից, այլ նաև լեզվական, քանի որ հստակ է, թե ինչպես է փոխվում աղոթքի հասցեատերը: Գիտա-քննական բնագրում մինչև § 96-ը աղոթքը ուղղված է Հորը, իսկ § 97-ից մինչև վերջ՝ Որդուն: Հորից դեպի Որդի այդ անցումը լեզվական տեսանկյունից որևէ կերպ չի արտահայտվում, ավելին՝ կտրուկ է և անտրամաբանական, ինչը չի կարելի ասել ՄՄ վերոհիշյալ երեք ձեռագրերում ներկայացված տարբերակի վերաբերյալ:

«Ագաթանգեղոսի պատմության» գիտա-քննական բնագրի վերջին խնդրահարույց տեղին սբ. Հռիփսիմեին վերագրվող աղոթքն է, ԺԵ գլխում՝ «չար ամբոխին» տեսնելու ժամանակ.

«196 Տէր աստուած ամենակալ, որ հաստատեցեր զարարածս քո ի ձեռն Որդւոյ քոյ միածնի եւ սիրելոյ, եւ կազմեցեր յաւրինուածս երեւելի եւ աներևոյթ արարածոց ի ձեռն Հոգւոյդ սրբոյ. դու ես որ յոչնչէ զամենայն յեղօթիւն յաւրինեցեր, եւ քոյով հրամանաւ վարին ամենայն զաւրութիւնք երեւելիք եւ աներևոյթք, որ են յերկինս եւ յերկրի, ի ծովու եւ ի ցամաքի: Քանզի դու ես, Տէր, որ ետուր յողող ջուրց զանարէն պղծալից մարդիկ ուղեղորդ դարուն, եւ փրկեցեր զսիրելին քո զՆոյ, որ պահեաց զհրաման քանի քոյ, եւ ասրեցուցեր խաչանման փայտիւն ի ջուրցն հեղեղէ: Որ յայնժամ արինակաւ խաչին արարեր զփրկութիւն՝ եւ այժմ արա՛ ճշմարտութեամբ խաչիդ քոյ, յոր եղեր եւ հեղեր զարիւն քո ի բժշկութիւն ցաւոց մերոց» (Ագաթանգեղոս, 2003):

Այս դրվագի սկզբից երևում է, որ աղոթքի հասցեատերը Հայր Աստվածն է (ի ձեռն Որդւոյ քոյ), ով, ըստ վերջին նախադասության, խաչվել է և հեղել իր արյունը. «*Խաչիդ քոյ, յոր եղեր եւ հեղեր զարիւն քո*»: Կրկին, եթե քննենք ՄՄ թիվ 1479 և թիվ 1859 ձեռագրերը, կտեսնենք, որ վերջին նախադասության ենթական Միածինն է, այլ ոչ թե Հայրը. «*սուրբ խաչին, յոր ել միածինդ քո եւ հեղ զարիւն իւր*» (Ագաթանգեղոս, 2003):

Ուշագրավ է, որ վերը քննված խնդրահարույց դրվագները առկա են ոչ միայն Ագաթանգեղոսի պատմության հայերենով պահպանված ձեռագրերում (որոնք և

ուսումնասիրվել են գիտա-քննական բնագրի շրջանակներում), այլ նաև այս «ազգային» խմբագրությանը պատկանող տարալեզու բնագրերում:

Հունարեն քննական բնագրի և արաբերեն թարգմանության մեզ հասած բնագրի հիշյալ 4 դրվագներում, ինչպես նաև «Հռիփսիմյանց վկայաբանության» վրացերեն թարգմանության քննական բնագրում պահպանված սբ. Հռիփսիմեին վերգրվող աղոթքում խնդրահարույց այս դրվագները ներկայացված են նույնությամբ (Lafontaine, 1973; Տեր-Ղևոնդյան, 1968; Մուրադյան, 1982), թեև հունարեն բնագրի § 93-94 հատվածի տարընթերցումներում երևում է, որ կան ձեռագրեր, որտեղ ոչ թե Հայրն է զոհաբերվում իր հոտի համար, այլ՝ Որդին (Lafontaine, 1973):

Միևնույն ժամանակ, Ազաթանգեղոսի պատմության խմբագրությունների երկրորդ խմբին պատկանող ձեռագրերում, որոնք հայտնի են «Վարք Գրիգորի» անվամբ, ևս առկա են հիշյալ աղոթքները, որոնցում ներկայացված աստվածաբանությունը հստակ է և որևէ հակասական տողեր չի պարունակում (Garitte, 1946; Տեր-Ղևոնդյան, 1973; Mapp, 1906): Նմանապես, վարքից և ազգային խմբագրությունից բխող ասորերեն խմբագրության և դրա քարշունի (ասորատառ արաբերեն) թարգմանության մեջ առկա է սբ. Հռիփսիմեին վերգրվող աղոթքը՝ առանց հակասական որևէ գաղափարի (Esbroeck, 1977; Esbroeck, 1971):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազաթանգեղոսի պատմության» ազգային խմբագրության հայերենով պահպանված այն սակավաթիվ ձեռագրերը, որոնցում աստվածաբանական շփոթ չկա, հունարեն այն ձեռագրերը, որոնցում չորսը դրվագների փոխարեն միայն երեքում են առկա հակասությունները և այն հանգամանքը, որ «Ազաթանգեղոսի պատմության» մնացյալ խմբագրություններում առկա նույն աղոթքներում ևս չկան հակասական գաղաթարներ, խոսում են այն մասին, որ թեև խնդրո առարկա չորսը դրվագները վաղուց ի վեր եղել են «Ազաթանգեղոսի պատմության» ազգային խմբագրության մեջ, այդուհանդերձ՝ դրանց հարազատությունը բնօրինակին վիճելի է: Առկա աստվածաբանական հակասությունները, ամենայն հավանականությամբ, ծնունդ են հետագայի խմբագրական միջամտությունների կամ ձեռագրերի անփույթ արտագրության, ինչն իր հերթին, ոչ միայն հարց է առաջացնում, թե ինչու են նման անհամապատասխանությունները դարեր շարունակ աննկատ մնացել կամ անուշադրության մատնվել մատենագիրների ու գիտնականների կողմից, այլև՝ հրամայական է ստեղծում վերականգնելու հիշյալ կոթողային աշխատության տրամաբանական ու աստվածաբանական ամբողջականությունն ու վավերականությունը:

Այսպիսով, ընդունելով Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի կատարած աիռելի աշխատանքի անգնահատելի արժեքը՝ ցանկանում ենք ընդգծել «Ազաթանգեղեայ

պատմութիւն» երկի նոր և ավելի խորը բնագրագիտական քննության անհրաժեշտությունը՝ հարկ եղած դեպքում նաև նոր քննական բնագրի հրապարակման նպատակով: Հակառակ դեպքում, ի թիվս այլ խնդիրների, երկում առկա աստվածաբանությունը շարունակելու է մնալ խաթարված՝ բնագրի առկա շարադրանքով պայմանավորված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ագաթանգեղոս.** (1909). *Պատմութիւն Հայոց. Աշխատութեամբ՝ Գաղուստ Տէր-Մկրտչեանի եւ Ստեփանոս Կանայեանցի*. Տփղիս, Արագատիպ Մնացականյա Մարտիրոսյանցի.
- Ագաթանգեղոս.** (2003). *Պատմութիւն*. Մատենագիրք Հայոց, Ե դար, Բ հատ., էջ 1289-1735. Անթիլիաս-Լիբանան.
- Մուրադյան, Պ.** (1982). *Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները*. Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.
- Տեր-Ղևոնդյան, Ա.** (1968). *Ագաթանգեղոսի արարական նոր խմբագրությունը (արարերեն բնագիր և ուսումնասիրություն)*. Երևան: ՀՍՍՀ ԳԱ.
- Տեր-Ղևոնդյան, Ա.** (1973). *Ագաթանգեղոսի արարական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը*. Պատմա-բանասիրական հանդես, (1), 209-237.
- Март, Н.** (1906). *Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (Арабская версия)*. Записки Восточного Отделения Императорского Русского Археологического Общества, 16, 63-211. СПб.
- Esbroeck, M. van.** (1971). *Un nouveau témoin du livre d'Agathange*. Revue des Études Arméniennes, 8, 43-44. Paris.
- Esbroeck, M. van.** (1977). *Le résumé Syriaque de l'Agathange*. Analecta Bollandiana, 95, 291-358. Bruxelles.
- Garitte, G.** (1946). *Documents pour l'étude du livre d'Agathange (Studi e Testi 127)*. Città del Vaticano: Biblioteca Apostolica Vaticana.
- Lafontaine, G.** (1973). *La version grecque ancienne du livre arménien d'Agathange (Publications De L'Institut Orientaliste De Louvain 7)*. Louvain-la-Neuve: Université catholique de Louvain, Institut Orientaliste.
- Winkler, G.** (1980). *Our present knowledge of Agat'angelos and its Oriental versions*. Revue des Études Arméniennes, nouvelle série, 14, 125-141.

REFERENCE LIST

- Agatangelos.** (1909). *Istoriia Armenii (The History of Armenia)*. Pod redaktsiei Galust Ter-Mkrtchiana i Stepanosa Kanaiantsa. Tiflis, Aragatip Mnatsakaniana Martirosiantsa.

- Agatangelos.** (2003). *Istoriia (History)*. Matenagirk Aiots, V vek, t. 2, str. 1289–1735. Antilias-Livan.
- Muradian, P.** (1982). *Drevnegruzinskie redaktsii Agatangelosa (The Old Georgian Versions of Agathangeghos)*. Erevan: Izdatelstvo AN ArmSSR.
- Ter-Gevondian, A.** (1968). *Novaia arabskaia redaktsiia Agatangelosa, arabskii original i issledovanie (The Newly Discovered Arabic Recension of Agathangelos, Arabic Text and Study)*. Erevan: Izdatelstvo AN ArmSSR.
- Ter-Gevondian, A.** (1973). *Novoobnaruzhennyi polnyi tekst arabskoi redaktsii Agatangelosa (The Newly-found Complete Text of the Arabic Version of Agathangelos)*. *Istoriko-filologicheskii zhurnal*, (1), 209–237.
- Marr, N.** (1906). *Kreshchenie armian, gruzin, abkhazov i alanov sviatym Grigoriem, Arabskaia versiia (The Baptism of the Armenians, Georgians, Abkhazians, and Alans by Saint Gregory, Arabic version)*. *Zapiski Vostochnogo Otdeleniia Imperatorskogo Russkogo Arkheologicheskogo Obshchestva*, 16, 63-211. SPb.
- Esbroeck, M. van.** (1971). *Un nouveau témoin du livre d'Agathange*. *Revue des Études Arméniennes*, 8, 43-44. Paris.
- Esbroeck, M. van.** (1977). *Le résumé Syriaque de l'Agathange*. *Analecta Bollandiana*, 95, 291-358. Bruxelles.
- Garitte, G.** (1946). *Documents pour l'étude du livre d'Agathange (Studi e Testi 127)*. Città del Vaticano: Biblioteca Apostolica Vaticana.
- Lafontaine, G.** (1973). *La version grecque ancienne du livre arménien d'Agathange (Publications De L'Institut Orientaliste De Louvain 7)*. Louvain-la-Neuve: Université catholique de Louvain, Institut Orientaliste.
- Winkler, G.** (1980). *Our present knowledge of Agat'angelos and its Oriental versions*. *Revue des Études Arméniennes*, nouvelle série, 14, 125-141.

РЕЗЮМЕ

ЗАМЕЧАНИЯ К НАУЧНО-КРИТИЧЕСКОМУ ТЕКСТУ «ИСТОРИИ АГАФАНГЕЛА»

ИЕРЕЙ МОВСЕС (ДАВИД) СААКЯН

В статье проводится богословский анализ критического издания «Истории Агафангела», составленного Галустом Тер-Мкртчяном и Степаносом Канаянцем.

Исследуются проблемные фрагменты, содержащие богословские противоречия, связанные с ипостасью Бога Отца и воплощением Бога Сына. Рассматриваются отдельные

молитвы и разделы из «Истории Агафангела», в которых выявлены идеи, не согласующиеся с христианской теологией, представленной в других частях произведения.

Особое внимание уделяется возможности того, что упомянутые противоречия могли возникнуть в результате ошибок переписывания или редакторских изменений исходных рукописей.

В заключении подчеркивается необходимость проведения нового текстологического исследования «Истории Агафангела», основанного на более широком спектре рукописей, что особенно важно для обеспечения богословской точности текста.

Ключевые слова: Агафангелос, оригинал, рукопись, печать, редактирование, спор, теология, язык.

ABSTRACT

NOTES ON THE SCHOLARLY-CRITICAL TEXT OF "AGATHANGELOS' HISTORY"

FR. MOVSES (DAVIT) SAHAKYAN

The article presents a theological analysis of the critical edition of the *History of Agathangelos*, compiled by Galust Ter-Mkrtchyan and Stepanos Kanayants.

The study examines problematic fragments containing theological contradictions concerning the nature of God the Father and the incarnation of God the Son. It analyzes specific prayers and sections from the *History of Agathangelos*, where ideas inconsistent with the Christian theology, as presented in other parts of the same work, are identified.

Special attention is given to the possibility that the aforementioned contradictions might have arisen due to errors in copying or editorial changes made to the original manuscripts.

In conclusion, the article emphasizes the necessity of conducting a new textological study of the *History of Agathangelos*, based on a broader spectrum of manuscripts, which is particularly significant for ensuring the theological accuracy of the text.

Keywords: Agathangehos, original, manuscript, printing, editing, controversy, theology, language.

Հոդվածը ստացվել է 10.02.2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 20.02.2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 25.03.2025

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ
ՆԵՐԿԱՅԻՍ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան,

Էլ. հասցե՝ tigran-ghazaryan@inbox.ru

DOI: 10.24234/scientific.v1i48.192

ԱՄՓՈՓՈՒՄ

Հասարակության ինքնության, զարգացման, քաղաքացիական համերաշխության ու ներդաշնակության և առհասարակ պետության գոյության բնականոն ընթացքն ապահովելու գործում էական դերակատարում ունի քաղաքական կայունությունը: Քաղաքական կայունություն ունեցող հասարականություններում բավականին քիչ է քաղաքական ցնցումների ու քաղաքացիական անկարգությունների հավանականությունը, քաղաքական ղեկավարությունը դրսևորում է ունակություն հենց առաջացման վաղ փուլում կարգավորելու հասարակության մեջ նկատվող քաղաքական հակասությունները, կարողություն՝ բացառելու սոցիալ-քաղաքական բախումները, ապստամբությունները, ապահովելու տնտեսական կայունությունը, երկրի սահմանների անխախտելիությունը, արտաքին սպառնալիքների չեզոքացումը: Նման պայմաններում հնարավորություն է ստեղծվում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կազմել երկարաժամկետ պլաններ, կատարել ներդրումներ և այլն: Քաղաքական կայունություն ապահովելու համար ղեկավարությունը պետք է մշակի ճիշտ ռազմավարություններ և ունենա քաղաքական կամք այդ ռազմավարությունները կյանքի կոչելու համար:

Քաղաքական կայունության հայեցակարգը բավականին արդիական է քաղաքագիտության շրջանակներում և մշտապես եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Հայեցակարգը ուսումնասիրվում է նաև տարբեր ոլորտներում՝ տնտեսագիտություն, սոցիոլոգիա, միջազգային հարաբերություններ:

Այսօր չկան քաղաքական կայունության հասնելու ուղիների վերաբերյալ միասնական տեսակետներ: Բազմաթիվ են քաղաքական կայունության վերաբերյալ մեկնաբանությունները, սահմանումները, տարբեր հետազոտողներ առաջ են քաշում քաղաքական կայունության վրա ազդող գործոնների իրենց տեսակները, մշակում մեթոդներ քաղաքական կայունության վերաբերյալ:

Այս հոդվածում վերլուծվում են քաղաքական կայունության վրա ազդող առավել տարածված գործոնները, մեկնաբանվում է հասկացությունը և ներկայացվում սահմանումները: Հոդվածի նպատակն է վերլուծել քաղաքական կայունության վրա ազդող հիմնական գործոնները, գնահատել դրանց ազդեցությունը, ինչպես նաև ներկայացնել քաղաքական կայունության հասկացությունը ու սահմանումները՝ նշելով դրանց մեկնաբանությունները տարբեր գիտնականների կողմից: Ուսումնասիրության նպատակին հասնելու համար օգտագործվել է համադրական վերլուծության մեթոդաբանություն՝ ընդգրկելով տարբեր ուսումնասիրություններ, հիմնվելով թեմայի վերաբերյալ ներկայիս առաջատար տեսական գործերի և իրական օրինակների վրա: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ քաղաքական կայունությունը պայմանավորված է մի շարք ներքին և արտաքին գործոններով, որոնք կարող են տարբեր ազդեցություն ունենալ պետության տարբեր մակարդակներում: Ուսումնասիրությունը նաև ընդգծում է այն կարևորությունը, որ քաղաքական ղեկավարությունը մեծ դերակատարություն ունի կայունության ապահովման գործում, և այս գործոնների ամբողջական ու համակարգված վերլուծության միջոցով հնարավոր է ձևավորել ավելի արդյունավետ մոտեցումներ կայունության պահպանման համար:

***Բանալի բառեր՝** քաղաքական կայունություն, քաղաքական ինստիտուտներ, լեգիտիմություն, օրենքի գերակայություն, լիդերություն, էթնիկ խմբեր, քաղաքացիական անհնազանդություններ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը ներկայացնում է քաղաքական կայունության բազմակողմանի բնույթը՝ ընդգծելով դրա և դրա հիմնական լեգիտիմությունը, քաղաքականները, օրենքի գերակայությունը, անվտանգ անվտանգությունը, էթնիկ խմբերի համախմբվածությունը, քաղաքական համակարգը, ինստիտուտները, ռեժիմը տնտեսությունը: Այն նաև ընդգծում է, որ քաղաքական կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ են ռազմավարական քայլեր՝ ուղղված անկայունության պատճառների վերացման երկարաժամկետ ժամանակին:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում օգտագործված մեթոդաբանությունը կարելի է և նկարագրել որպես **տեսական-վերլուծական մեթոդ**՝ հիմնված տարբեր տեսությունների, սահմանումների պատմական օրինակների համադրման վրա: Օգտագործված մեթոդներն են՝ համադրական մեթոդ – Հոդվածում ներկայացված են տարբեր գիտնականների սահմանումներ («Ի.Ս.Բալյան», «Զլոդ Աքե», «Լ.Վարդանյան», «Վ.Պողոսյան») և տարբեր ժամանակաշրջաններում (Հին Հունաստան, միջին դարեր, ժամանակակից աշխարհ)

գործածվող քաղաքական կայունության մոդելներ: Պատմական մեթոդ – հոդվածը ցույց է տալիս քաղաքական կայունության էվոլյուցիան՝ սկսած հնագույն ցեղապետության ժամանակակից քաղաքական համակարգերից: Կառուցվածքային-ֆունկցիոնալ մեթոդ – հոդվածը ներկայացնում է քաղաքական կայունության օրինակը՝ շեշտադրելով դրանց փոխազդեցությունները (լեգիտիմություն, քաղաքական լիդերություն, օրենքի գերակայություն և այլն): Փորձագիտական – հոդվածը հղումներ է անում տարբեր գիտնականների աշխատություններին՝ ապահովելով գիտական հիմնավորվածություն: Տարբերակված – քաղաքական կայունության որոշումն առանձնանում է առանձին կետերով՝ ընդգծելով դրանց դերն ու ազդեցությունը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Կայունություն» տերմինը (լատիներեն *stabilis* - կայուն, հաստատուն, անփոփոխ) նշանակում է ամրապնդել, մշտական կայուն վիճակի բերել կամ պահպանել այս վիճակը, օրինակ՝ ապահովել ցանկացած գործընթացի կայունությունը: Ժամանակակից քաղաքական տեսության մեջ չենք կարող գտնել միանշանակ սահմանում, քանի որ կայունության վրա ազդող գործոնները բազմաթիվ են: Հայրենական հետազոտողներից Ի.Ս.Բալյանը սահմանում է՝ «Քաղաքական կայունությունը հասարակության քաղաքական կյանքի բնութագրությունն է, վիճակը, որը դրսևորվում է ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ քաղաքական ինստիտուտների գործունեության մեջ: Քաղաքական կայունությունը տվյալ համակարգի ընդունակությունն է երկար ժամանակահատվածում առանց կտրուկ փոփոխությունների գործառել և պահպանել իր ամբողջականությունը:» Նիգերիացի քաղաքագետ Քլոդ Աքեն տալիս է հետևյալ սահմանումը՝ «Քաղաքական կայունությունը իրավիճակ է, որը բնութագրվում է անձեռնմխելի և անխափան գործող կառավարության կամ քաղաքական համակարգի պահպանմամբ՝ խուսափելով էական խափանումներից կամ փոփոխություններից երկարաժամկետ տևողությամբ» (Claude Ake, 1975): Գրիշինը նշում է, որ քաղաքական կայունությունը փոփոխական (մոդելավորված) կատեգորիա է, որը որոշում և ամրագրում է քաղաքական հարաբերությունների ցանկալի վիճակը (Евгеньевич Г. О., 2015): 1993 թվականին Մոսկվայի Առևտրային համալսարանի հրատարակչության կողմից հրատարակված հանրագիտարանային բառարանում «Քաղաքական կայունությունը» ներկայացվում է որպես տարբեր քաղաքական սուբյեկտների միջև կապերի համակարգ, որը բնութագրվում է որոշակի ամբողջականությամբ և իրեն վերապահված գործառույթներն արդյունավետ իրականացնելու կարողությամբ (Аверьянов Ю. И., 1993):

Տարբեր ժամանակներում գործել են քաղաքական կայունության տարբեր մոդելներ: Եթե օրինակ դիտարկման օբյեկտ ենք վերցնում ցեղապետությունները, ապա անհարժեշտ է նշել, որ ցեղերի առաջնորդների միջև առկա համաձայնությունների պայմաններում է

հնարավոր եղել ապահովել տարբեր ցեղերի միջև ներդաշնակ կապն ու ցեղապետությունների գոյությունը: Հին Հունաստանի քաղաք պետություններում համաձայնությունը հիմնված է եղել թվային բնույթի ներդաշնակ հարաբերությունների վրա (Սոլոնի բարեփոխումները, Աթենք), որը ապահովել է պոլիսի տարբեր խմբերի միջև համաձայնությունը: Միջին դարերում եկեղեցին և ավանդույթներն են ապահովել պետության ներքին կայունությունը: Մեր օրերում քաղաքական կայունության հասնելը բավականին բարդ է: Քաղաքական կայունությունը համակարգ է, որը բաղկացած է բազմաթիվ գործոններից և դրանց միջև առկա հարաբերություններից: Նոր ժամանակներում քաղաքական կայունության վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Ներկայացնենք այդ գործոններից մի քանիսը.

1. Լեգիտիմություն: Քաղաքական կայունությունը էապես կախված է իշխանության լեգիտիմության մակարդակից: Լեգիտիմությունը իշխանության նկատմամբ ունեցած վստահության դրսևորումն է, որը բխում է քաղաքացիների այն համոզմունքից, որ քաղաքական ինստիտուտների գործունեությունն արդարացված է, և պետական պաշտոնատար անձինք իրենց գործողություններով հաշվետու են ժողովրդին, իսկ հասարակության մեջ առկա խնդիրների լուծման անմիջական հաղորդակիցն էլ դառնում է պետության քաղաքացին (Սարգսյան, Ա. 2021): Լեգիտիմության սպառման դեպքում պետությունները պարտադրված առնչվում են քաղաքական անկայունության հետ՝ իր հնարավոր բոլոր բացասական հետևանքներով: Միշտ էլ լեգիտիմության յուրաքանչյուր ճգնաժամ տեղի է ունեցել, երբ հասարակության մեծ կամ կարևոր հատվածը համաձայն չի եղել որոշակի ռեժիմի կամ կառավարության կողմից հաստատված և առաջ մղվող նորմերի հետ: Երբ կառավարությունը կորցնում է աջակցությունը, այն վտանգում է կորցնել նաև իր լեգիտիմությունը, այս պարագայում հասարակությունը գործող իշխանությունների նկատմամբ սկսում է դրսևորել բացասական վարքագիծ հեղափոխությունների, հեղաշրջումների և քաղաքացիական պատերազմների տեսքով: Հասարակություն-իշխանություն անհամաձայնության դասական օրինակներից են քաղաքացիական անհնազանդության ցույցերը, որոնց տևականությունն ու աստիճանաբար ուժգնացումը ի վերջո բերում են քաղաքական անկայունության վիճակի:

2. Քաղաքական լիդեր: Քաղաքական կայունության պայմանավորված է նաև քաղաքական առաջնորդի անձնային անհատական հատկանիշներով, համոզմունքներով և դիրքորոշումներով: Քաղաքական գործընթացների ճշգրիտ վերահսկման, կայունության ապահովման ճանապարհին հասարակության վստահությունը շահելու, իր կողքին համախմբելու, աջակցություն ստանալու նպատակով քաղաքական առաջնորդը պետք է ունենա քաղաքական լիդերին բնորոշ անհրաժեշտ որակներ:

Քաղաքական լիդեր է նա, որ իշխանություն ունի մարդկան որոշակի խմբի նկատմամբ, հմուտ է քաղաքական գործունեության մեջ, ունի մշակված ծրագրեր, վճիռներ կայացնելու ունակություն, դրանք իրագործելու ընդունակության դրսևորում, յուրահատուկ հատկանիշներ, որոնք նպաստում են կառավարման գործընթացի կազմակերպմանը:

Քաղաքական լիդերությունը փոխկապակցված է քաղաքական լեգիտիմության հետ և միաժամանակ պայմանավորում են քաղաքական կայունության վիճակը: Լ.Վարդանյանն ու Վ.Պողոսյանը քաղաքական լիդերությունը սահմանում են որպես մեկ կամ մի քանի անձերի լեգիտիմ գերիշխանություն որոշակի խմբի, կազմակերպության վրա, որը պայմանավորված է նրանց յուրահատուկ ընդունակություններով և խմբի անդամների բարոյական վերաբերմունքով (Վարդանյան Լ., Պողոսյան Վ., 2018):

3. Օրենքի գերակայություն: Պետությունում քաղաքական կայունության ապահովման կարևոր դետալներից է նաև օրենքի գերակայության ապահովումը: Պետությունը չի կարող համարվել իրավական, եթե նրանում չկա օրենքի գերակայություն: Օրենքի գերակայությունը դա իշխանությունների՝ իրավական և քաղաքական համակարգերով, կառուցվածքներով և պրակտիկայով պայմանավորված գործողություններ են, որոնք ապահովում են քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանվածությունը, ընդունված օրենքների կիրառումը՝ նպաստելով պետության արդյունավետ կառավարմանը (ԹԻՀԿ, հակակոռուպցիոն բաժարան): Օրենքի դրույթների անհասանելիությունը, հայեցողությամբ իրավական հարցերի լուծումը, օրենքի առջև հավասարության չապահովումը, մարդու իրավունքների պաշտպանության բացակայությունը, անարդար դատավարությունները և տարբեր ոլորտներում չարաշահումները օրենքի գերակայությունն ամբողջովին բացառող և քաղաքական կայունությունը խաթարող գործոններ են: Ոչ մի քաղաքական ղեկավարություն չի կարող հասնել կայունության, եթե ընդունակ չէ բացառելու վերը թվարկված գործոնների առկայությունը:

4. Իրավական անվտանգություն: Օրենքի գերակայությունն ապահովում է իրավահարաբերության սուբյեկտների (պետություն, պետական մարմիններ, կազմակերպություններ, անհատ, հասարակություն) կենսական իրավական շահերի պաշտպանությունը, այս պարագայում մենք առնչվում ենք «Իրավական անվտանգություն» հասկացության հետ: Իրավական անվտանգությունը ազգային անվտանգության ապահովման բաղադրատարրերից է և ժամանակակից մեկնաբանություններում այն սահմանվում է որպես իրավական գործունեության միջոցով մարդու, հասարակության և պետության իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանվածության վիճակ (Липинский Д. А., Мусаткина А. А., 2019): Իրավական անվտանգության առկայությունն

ապահովում է նաև իրավական պատասխանատվության իրագործումը, որի նպատակն է պետական հարկադրանքի միջոցով ապահովել ազգային անվտանգության իրավական կարգավորումը: Այսինքն՝ քաղաքական կայունության ապահովման համատեքստում իրավական անվտանգությունն անհրաժեշտ է այնքանով, որ կբացառի մարդու իրավունքների և ազատությունների ոտնահարումը, պետական մարմիններում կամայականությունները, որոնք հասարակության մոտ դժգոհություններ առաջացնող գործոններ են:

5. Էթնիկ խմբերի համախմբվածություն: Էթնիկ խումբը հասկացվում է որպես ընդհանուր էթնիկ ինքնություն ունեցող, ընդհանուր անուն և մշակույթի տարրեր կիսող և այլ համայնքների հետ հիմնարար կապերի մեջ գտնվող մարդկանց խումբ (*Энциклопедия «Народы и религии мира»*): Քաղաքական կայունության համար սպառնալիք են նաև էթնիկ բախումները պետության ներսում, ազգային խտրականության դրսևորումները: Տարբեր արժեհամակարգերի և ավանդույթների հակասություններով պայմանավորված՝ կարող են առաջանալ ազգամիջյան լարվածություններ, ընդհուպ մինչև էթնոսոցիալական բախումների միջոցով վտանգել պետության տարածքային ամբողջականությունը: Էթնիկ պատկանելության նկատմամբ կառավարությունը պետք է կարողանա վարել ճիշտ քաղաքականություն, այն է՝ աջակցել էթնիկ խմբերի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացմանը, բացառել ազգային, կրոնական, ռասսայական խտրականության տարրեր ձևերի դրսևորումները, պաշտպանել ազգային փոքրամասնությունների իրավունքներն ու ազատությունները, ունենալ վերահսկելի միգրացիա, պետության ներսում յուրաքանչյուրի համար հավասարապես ստեղծել պայմաններ արժանապատիվ կյանքի ու զարգացման համար:

6. Քաղաքական համակարգ: Քաղաքական համակարգը ֆունկցիոնալ կախվածության սկզբունքով ձևավորված հասարակության քաղաքական կազմակերպական ինստիտուտցիոնալ եղանակ է, որի հիմնական խնդիրներից մեկը կայունության ու կարգավորվածության քաղաքական ամենօրյա արտադրության կազմակերպումն է (Հարությունյան Է.Ա., 2002):

Այն առաջին հերթին կառավարման բարդ համակարգ է, որի գործառույթներն են այնպիսի ոլորտային հարցեր, ինչպիսիք են իշխանությունը, մշակույթը, իրավաբանությունը, տնտեսությունը, սոցիալական հարաբերությունները, քաղաքական ինստիտուտները և այդ ինստիտուտներով պայմանավորված գործընթացները: Քաղաքական կայունությունը կախված է նաև քաղաքական համակարգի տարրերի (պետական մարմիններ, կուսակցություններ, հասարակական շարժումներ, շահագրգիռ խմբեր) միջև առկա փոխհարաբերությունների բնույթից՝ համագործակցություն, մրցակցություն, թշնամանք, չեզոքություն և այլն: Կառուցողական և ներդաշնակ

հարաբերությունները նպաստում են քաղաքական կայունության ապահովմանը: Քաղաքական համակարգի կայուն պարամետրերը, որոնք ապահովում են կառուցվածքի պահպանումը և որոշում են նրա գործունեության ու զարգացման արդյունավետությունը արտաքին և ներքին գործոնների ազդեցության տակ, ձևավորում են քաղաքական կայունություն: Քաղաքական կայունությունը կախված է սոցիալական հավասարակշռությունից և հասարակության մեջ ինտեգրումից, արժեքներից, ավանդույթներից և տարրեր շահերից (Гришин О. Е., 2015):

Քաղաքական համակարգը պետք է լինի արդյունավետ, ունակ արձագանքելու ցանկացած խնդիրների, կարգավորի քաղաքական ու հասարակական հարաբերությունները, վերահսկի իր ամբողջականությունն ապահովող տարրեր քաղադրատարրերի գործողությունները: Այն քաղաքական համակարգերը, որոնք ընդունակ չեն ապահովելու իրենց արդյունավետությունը, չեն կարող ապահովել նաև քաղաքական կայունություն:

7. Քաղաքական ինստիտուտներ: քաղաքական ինստիտուտները քաղաքական համակարգի կարևորագույն տարրերն են, դրանք ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցներ են, որոնք իրականացնում են մի շարք կարևոր գործառնություններ՝ նպաստելով քաղաքական կայունության ամրապնդմանը: Այդ գործառնություններն են՝

- Կայունացնող (օրինակ՝ ոստիկանությունը), քանի որ քաղաքական ինստիտուտները պատմականորեն ձևավորվել են հասարակության մեջ էվոյուցիոն ձևով, նրանք պահպանողական են և նպաստում են իրերի գոյություն ունեցող կարգի պահպանմանը: Հենց ինստիտուտների կողմից սահմանված խաղի կանոնների կայունությունը քաղաքական կայունության պահպանման բանալին է:
- Կազմակերպչական և կառավարչական (պետական ծառայություններ) - ինստիտուտները սահմանում են նորմեր և կանոններ, որոնցով պետք է առաջնորդեն քաղաքական գործընթացի սուբյեկտները: Ինստիտուտների ներսում մարդիկ համախմբվում են քաղաքական վարքագծի ամենաարդյունավետ (կամ գոնե ամենահայտնի) մոդելների շուրջ: Ինստիտուտները կազմակերպում են քաղաքական գործընթացի սուբյեկտները և սահմանում դրանց գործունեության ողորդությունները:
- Վերահսկողություն (դատախազություն, հանրային լուսմներ)- քաղաքական ինստիտուտները պարունակում են ֆորմալ կամ ոչ ֆորմալ պատժամիջոցներ քաղաքական սուբյեկտների համար, ովքեր դուրս են գալիս որոշակի կանոններից (կամ խստորեն հետևում են դրանց) կամ ենթադրում են որևէ հետևանքների առաջացում (քրեական պատասխանատվությունից կամ հեղինակությանը վնասելուց մինչև մեղալ շնորհելը կամ կարիերայի աճը): Ուստի

քաղաքական ինստիտուտները գործում են որպես կարգուկանոն ապահովելու գործիք:

- Հաղորդակցական (լրատվամիջոցներ)– քաղաքական ինստիտուտները նախագծված են տարբեր քաղաքական սուբյեկտների միջև փոխգործակցություն ապահովելու համար, մասնավորապես՝ հասարակության և պետության միջև երկկողմանի հաղորդակցություն:
of Russia and condemning the ethnic cleansing of Georgians in those territories. In March 2011, the Russians demanded the annexation of the village of Aibga, located in the northwestern part of Abkhazia, to the Krasnodar region. During the Soviet Union, the village was divided into two parts, with the southern part under Georgian SSR control and the northern part under the Russian SFSR. Later, the Russian authorities also demanded 160 kilometers of land from the Gagra district in Abkhazia. Despite all this, the Abkhaz authorities were able to prove that the southern part of the Aibga village had been part of the Georgian SSR, and the village was partially annexed to the Russian Federation. On June 11, 2014, Prime Minister Irakli Garibashvili denied BBC News's statement that Russia "is not interested in relations with Abkhazia and South Ossetia." Members of the opposition United National Movement Party criticized Garibashvili's statement, considering it contradictory to the protection of the country's national interests (Geopolitics.am, n.d.). In November of the same year, Russia signed an agreement on "alliance and integration" with Abkhazia, and in March 2015, with South Ossetia (International Crisis Group, 2016). These serious internal and external shocks occurred during Mikheil Saakashvili's years in power, which, alongside great enthusiasm, were filled with significant losses. In the presidential elections held on October 27, 2013, the candidate supported by Saakashvili's party, Davit Bakradze, was unable to win (Kldiashvili, 2012). This was the most loss-filled period for independent Georgia since the collapse of the USSR.

Achievements

Thus, it can be concluded that the Georgian side still cannot take significant steps to exert pressure on the Russian side that would lead to actions aimed at the return of territories. The Western response to the Georgia-Russia war had a more economic sanctions nature, which caused significant losses to Russia, but at the same time, there was no other progress towards resolving the issue. To this day, Georgia's membership in NATO and the EU remains a dream, which is also a result of Russia's policy of deterrence. It is also a fact that after Saakashvili, anti-Russian sentiments have gradually decreased. There were some impulses that brought new signals of tension between the sides, such as the incident after the 2019 Interparliamentary Assembly of Orthodoxy, yet the Russian side has somewhat increased its influence in the region and in Georgia. Despite numerous documents that make Russia a security threat to Georgia, in the economic sphere, Russia has already been one of Georgia's leading economic partners for several years, and in 2022, it even rose to the second position, only behind Turkey. Against the backdrop of developing economic relations between the sides, there is no noticeable activity in political relations. Georgia's position on the issues of Abkhazia and South Ossetia has not changed, and officials regularly state on various platforms that there cannot be political dialogue with Russia as long as Russian troops are present on Georgian territory. Georgia is as much as possible refraining

from participating in formats that are initiated or involve Russia. In particular, Georgia did not join the “3+3” format, which has already hosted several meetings of foreign ministers from six countries in the region. The format includes Armenia, Azerbaijan, Iran, Russia, and Turkey.

Georgia's exclusion was also mentioned by Georgia's Minister of Foreign Affairs, Maka Botchorishvili, at the Antalya Diplomatic Forum on April 12, 2025, emphasizing that as long as Georgian territory is under Russian occupation, Georgia will not participate in such a format. The Karasin-Abashidze format, as well as meetings mediated by Switzerland and discussions on various issues, had a positive effect on the process of resolving Georgia-Russia relations, but politically, the views of the parties continue to remain contradictory. Russia, which recognized the independence of Abkhazia and South Ossetia, does not retreat on this issue, and the same applies to Georgia. It is hard to say whether the sides could restore relations politically without this territorial issue, but it is almost impossible to imagine the resolution of their political relations without resolving this issue. The position of the West, particularly the USA, in the context of regional policy is also important here, which, under the new administration of President Trump, seems less favorable for Georgia. President Trump has shown, through various actions and statements, that he holds a softer position towards Russia, which differs from the policy of former President Biden's administration. The development of events in Ukraine is also important, where it seems that Ukraine is losing its strategic positions. The Russian side also has significant losses, but in the context of positional advancements, it appears that Russia's successes will become more noticeable starting from 2025. The issue of Abkhazia and South Ossetia, although initially more international in nature, can now be said to have a more regional character and is gradually becoming a frozen conflict. Of course, there is a possibility of it heating up, as is the case with all conflicts, but due to the geopolitical realities, the policies of the new US administration, and the stance of the USA on the Ukrainian issue, we consider this less likely.

The West's certain passivity and lack of full support for Georgia's western integration and NATO and EU membership has created new problems for Georgia. Yes, there is talk of full support from the West, but practical steps have been insufficient. A vivid proof of this is that since the start of the conflict in 2008, there have been declarations about the importance of Georgia's membership and practical steps, but to this day, Georgia is not a member of Western institutions. Despite the adoption of the “Foreign Agents” law by the Georgian authorities in 2024, followed by parliamentary elections and the removal of Salome Zourabichvili Salome from the presidency, which attracted harsh criticism from Western countries and the EU, Georgia's membership in NATO and the EU remains a priority, as enshrined in Georgia's Constitution. The nature and developments of Georgia-Russia relations directly affect the entire region both economically and politically, so the stability of these relations also serves the national security interests of Armenia.

After the Artsakh war, a new reality has emerged in the region, which could potentially change the nature of the West-Armenia relations, making them deeper, and this may also affect Russia's regional policy decisions and its relations with Georgia.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- «Նորավանք» Հիմնադրամ. (2007). Վրաստան. փոփոխվող իրավիճակ. Այլադավան հայերի խնդիրը. *Գործու Վերլուծական Տեղեկագիր*, 17(25).
- Ab. (n.d.-b).** *Ռուս-վրացական (հարավօսական) հնգօրյա պատերազմը և դրա աշխարհաքաղաքական հետևանքները Հարավային Կովկասում* | GEOPOLITICS.AM. <http://geopolitics.am/archives/14331>
- ՄԱԿ.** (n.d.). *Անվտանգության խորհրդի 5951 նիստի արձանագրություն (S/5951)*. <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/PRO/N08/454/58/PDF/N0845458.pdf?OpenElement>
- Human Rights Watch.** (2009). *На войне как на войне? Нарушения гуманитарного права и жертвы среди гражданского населения в связи с конфликтом вокруг Южной Осетии* (pp. 69–73). Human Rights Watch.
- Interfax.** (2008, August 14). *Российские миротворцы не входили в грузинский город Потти*. Interfax. <http://www.interfax.ru/26624>
- Interfax.ru.** (2008, August 20). *Абхазия просит Россию признать свою независимость*. Interfax.ru. <http://www.interfax.ru/28408>
- Interfax.ru.** (2008, August 20). *Первый из трех американских военных кораблей доставил в Батуми гуманитарный груз*. Interfax.ru. <http://www.interfax.ru/world/28809>
- Interfax.ru.** (2008, August 22). *Абхазский Генштаб: Грузия планировала после захвата Южной Осетии завоевать Абхазию*. Interfax.ru. <http://www.interfax.ru/28626>
- Kommersant.ru.** (2009, August 15). *Германия отстаивает целостность Грузии*. Kommersant.ru. <http://www.kommersant.ru/doc/1012261>
- Lenta.ru.** (2008, August 16). *Взрыв железнодорожного моста в Грузии прервал сообщение с Арменией*. Lenta.ru. <http://lenta.ru/news/2008/08/16/bridge/>
- Lenta.ru.** (2008, August 8). *Грузия начала танковую атаку на южные окраины Цхинвали*. Lenta.ru. <http://lenta.ru/news/2008/08/08/tank/>
- Lenta.ru.** (2008, September 2). *Грузия вышла из соглашений по урегулированию осетинского конфликта*. Lenta.ru. <http://lenta.ru/news/2008/09/02/skk/>
- Lenta.ru.** (2022, December 9). *Российские войска вошли в грузинский город-порт Потти*. Lenta.RU. <http://lenta.ru/news/2008/08/12/poti/>

- Lenta.ru.** (2022a, December 9). Медведев пообещал начать вывод войск из Грузии 18 августа. *Lenta.RU*. <http://lenta.ru/news/2008/08/17/withdraw/>
- Regnum.ru (n.d.).** *Официальное заявление Тбилиси: Грузия приступила к наведению конституционного порядка.* Regnum. <http://www.regnum.ru/news/1037979.html>
- Regnum.ru.** (2014, August 5). *В области атомной энергетики Россия и США переходят в плоскость экономического сотрудничества.* Regnum.ru. <https://regnum.ru/news/economy/996999.html>
- Алленова, О.** (2008, August 8). Газета «Коммерсантъ». *Коммерсантъ*. <http://www.kommersant.ru/doc/1009540>
- Батрак, А., Дери, М., Нееф, К., & Шепп, М.** (2021, April 30). *Сергей Лавров: "Еще не поздно"*. InoPressa.ru. <http://inopressa.ru/article/16Feb2009/spiegel/lavrov.html>
- Газета, Р.** (2008, August 25). Госдума предложила иностранным парламентам поддержать независимость Абхазии и Южной Осетии. *Российская Газета*. <http://www.rg.ru/2008/08/25/duma-obraschenie-anons.html>
- Джигоев М.** (2009, February 25). *«Выработанные в Женеве механизмы по предотвращению и.* <http://cominf.org/node/1166479365>
- Кокойты, Э.** (2008, September 20). *Обращение Президента Республики Южная Осетия Эдуарда Кокойты.* Комитет по информации и печати Республики Южная Осетия. <http://cominf.org/2008/09/26/1166478369.html>
- Международная кризисная группа (МКГ).** (2016, May 24). *Абхазия и Южная Осетия: Пора говорить о торговле.* Международная кризисная группа (МКГ). <https://bit.ly/3aQNDkZ>
- Официальный сайт Президента РФ.** (2008, September 2). *Интервью итальянскому телеканалу РАИ.* Официальный сайт Президента РФ. http://archive.kremlin.ru/appears/2008/09/02/2155_type63379_206080.shtml
- Радио Свобода.** (2008, September 23). *В Грузию прибыла первая группа наблюдателей из Евросоюза.* Радио Свобода. <http://www.svoboda.org/content/news/466045.html>
- Симонян, Ю.** (2008, August 29). *Парламент Грузии объявил Абхазию и Южную Осетию оккупированными.* Независимая газета. http://www.ng.ru/cis/2008-08-29/5_georgia.html?mthree=4
- Центр новостей ООН.** (2008, September 27). *Кавказский кризис показал, что решать проблемы современности в шорах однополярного мира невозможно, заявил Сергей Лавров.* Центр новостей ООН. http://www.un.org/russian/news/story.asp?newsID=10356#.UxyFjPl_uY0
- UAClub.** (2010). *Russia-Georgia.* UAClub. http://news.uaclub.net/26_319203.html

- Staff, S.** (2008, September 14). a-cbd373b9-0001-0001-0000-000000578273. DER SPIEGEL, Hamburg, Germany. <http://www.spiegel.de/international/world/did-saakashvili-lie-the-west-begins-to-doubt-georgian-leader-a-578273.html>
- Chivers, C. J.** (2008, September 15). *Georgia offers fresh evidence on war's start*. The New York Times. <http://www.nytimes.com/2008/09/16/world/europe/16georgia.html?ref=world>
- Kldiashvili, G.** (2012, October 15). *The President in Opposition: Georgia's 2012 Parliamentary Elections*. Center for Security Studies (CSS). <https://css.ethz.ch/content/dam/ethz/special-interest/gess/cis/center-for-securities-studies/pdfs/CAD-43-2-5.pdf>

REFERENCE LIST

- Fond «Noravank».** (2007). Gruziya. izmenenie situacii. Problema armanov drugih veroispovedanij (*Georgia. A Changing situation. The issue of Armenians of other faiths*): Analiticheskij byulleten' «Globus», 17(25).
- OON.** (b/d). Protokol 5951-go zasedaniya Soveta Bezopasnosti (*UN Security Council meeting record* 5951. (S/5951). <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/PRO/N08/454/58/PDF/N0845458.pdf?OpenElement>
- Geopolitics.am.** (n.d.). Rus-vratsakan (haravosakan) hngorya paterazmy ev dra ashkharhakhaghakan hetevanknery Haravayin Kovkasyum (*The Russo-Georgian (South Ossetian) five-day war and its geopolitical consequences in the South Caucasus*). <http://geopolitics.am/archives/14331>
- Allenova, O.** (2008, August 9). Pervaja mirotvorcheskaja vojna (*The first peacekeeping war*). <http://www.kommersant.ru/doc/1009540>
- Dzhioev, M.** (n.d.). Vyrabotannye v Zheneve mehanizmy po predotvrashheniju i reagirovaniju na incidenty nosjat rekomendatel'nyj harakter (*The mechanisms developed in Geneva for preventing and responding to incidents are advisory in nature*). <http://cominf.org/node/1166479365>
- Human Rights Watch.** Na vojne kak na vojne? Narushenija gumanitarnogo prava i zhertvy sredi grazhdanskogo naselenija v svjazi s konfliktom vokrug Juzhnoj Osetii (2009) (*War as war? Violations of humanitarian law and casualties among civilians in the South Ossetia conflict*). 69-73.
- Interfax.ru** Abhazija prosit Rossiju priznat' svoju nezavisimost' (2008, August 20) (*Abkhazia asks Russia to recognize its independence*). <http://www.interfax.ru/28408>
- Interfax.ru** Abhazskij Genshtab: Gruzija planirovala posle zahvata Juzhnoj Osetii zavoevat' Abhaziju (2008, August 22) (*Abkhaz General Staff: Georgia planned to conquer Abkhazia after capturing South Ossetia*). <http://www.interfax.ru/28626>

- Interfax.ru** Pervyj iz treh amerikanskih voennyh korablej dostavil v Batumi gumanitarnyj gruz (2008, August 20) (*The first of three American military ships delivered humanitarian cargo to Batumi*). <http://www.interfax.ru/world/28809>
- Interfax.ru** Rossijskie mirotvorcy ne vhodili v gruzinskij gorod Poti (2008, August 14) (*Russian peacekeepers did not enter the Georgian city of Poti*). <http://www.interfax.ru/26624>
- Kokojty E.** (2008, September 20). Obrashhenie Prezidenta Respubliki Juzhnaja Osetija Jeduarda Kokojty. Komitet po informacii i pečati Respubliki Juzhnaja Osetija (*Address by the President of the Republic of South Ossetia, Eduard Kokoity*). <http://cominf.org/2008/09/26/1166478369.html>
- Kommersant.ru.** Germanija otstaivaet celostnost' Gruzii (2009, August 15) (*Germany defends the territorial integrity of Georgia*). Kommersant.ru <http://www.kommersant.ru/doc/1012261>
- Kremlin.ru** Interv'ju ital'janskomu telekanalu RAI (2008, September 2) (*Interview with the Italian TV channel RAI*). Oficial'nyj sajt Prezidenta RF. http://archive.kremlin.ru/appears/2008/09/02/2155_type63379_206080.shtml
- Lenta.ru.** Gruzija nachala tankovuju ataku na juzhnye okrainy Chinvali (2008, August 8) (*Georgia began tank attack on the southern outskirts of Tskhinvali*). <http://lenta.ru/neshhs/2008/08/08/tank/>
- Lenta.ru.** Gruzija vyshla iz soglashenij po uregulirovaniju osetinskogo konflikta (2008, September 2) (*Georgia withdrew from agreements on resolving the Ossetian conflict*). <http://lenta.ru/news/2008/09/02/skk/>
- Lenta.ru.** Medvedev poobeshhal nachat' vyvod vojsk iz Gruzii (2008, August 17) (*Medvedev promised to begin withdrawing troops from Georgia*). Lenta.ru. <http://lenta.ru/news/2008/08/17/withdraw/>
- Lenta.ru.** Rossijskie vojska voshli v gruzinskij gorod-port Poti (2008, August 12) (*Russian forces entered the Georgian port city of Poti*) <http://lenta.ru/neshhs/2008/08/12/poti/>
- Lenta.ru.** Vzryv zheleznodorozhnogo mosta v Gruzii prevral soobshhenie s Armeniej (2008, August 16) (*Explosion of a railway bridge in Georgia disrupted communication with Armenia*). <http://lenta.ru/news/2008/08/16/bridge/>
- MKG.** Abhazija i Juzhnaja Osetija: Pora govorit' o trgovle (2016, May 24) (*Abkhazia and South Ossetia: It's time to talk about trade*). Mezhdunarodnaja krizisnaja gruppа. <https://bit.ly/3aQNDkZ>
- OON.** Kavkazskij krizis pokazal, čto reshat' problemy sovremennosti v shorah odnopoljarnogo mira nevozmozhno, zjavil Sergej Lavrov (2008, September 27) (*The Caucasus crisis showed that solving contemporary problems in the constraints of a unipolar world is*

- impossible, said Sergey Lavrov). Centr novostej
http://www.un.org/russian/news/story.asp?newsID=10356#.UxyFjPl_uY0
- Radio Svoboda.** V Gruziju pribyla pervaja gruppа nabljudatelej iz Evrosojuza (2008, September 23) (*The first group of European Union observers arrived in Georgia*).
<http://www.svoboda.org/content/news/466045.html>
- Regnum (n.d.).** Oficial'noe zayavlenie Tbilisi: Gruzija pristupila k navedeniju konstitucionnogo porjadka. (*Official statement from Tbilisi: Georgia has begun restoring constitutional order*) <http://www.regnum.ru/news/1037979.html>
- Regnum.ru.** V oblasti atomnoj jenergetiki Rossija i SShA perehodjat v ploskost' jekonomicheskogo sotrudnichestva (2014, August 5) (*In the field of nuclear energy, Russia and the USA are shifting to economic cooperation*). Regnum.ru
<https://regnum.ru/news/economy/996999.html>
- Rossijskoj gazeta** Gosduma predlozhila inostrannym parlamentam podderzhat' nezavisimost' Abhazii i Juzhnoj Osetii (2008, August 25) (*The State Duma suggested foreign parliaments support the independence of Abkhazia and South Ossetia*..
<http://www.rg.ru/2008/08/25/duma-obraschenie-anons.html>
- Simonjan Yu.** (2008, August 29). Parlament Gruzii ob#javil Abhaziju i Juzhnuju Osetiju okkupirovannyymi (*The Georgian Parliament declared Abkhazia and South Ossetia occupied*). http://www.ng.ru/cis/2008-08-29/5_georgia.html?mthree=4
- Batrak, A., Deri, M., Neef, K., & Shepp, M.** (2021, April 30). Sergej Lavrov: "Eshhe ne pozdno" (*Sergey Lavrov: "It's not too late"*)
<http://inopressa.ru/article/16Feb2009/spiegel/lavrov.html>
- Chivers C.J.** (2008, September 15). Georgia offers fresh evidence on war's start.
<http://www.nytimes.com/2008/09/16/world/europe/16georgia.html?ref=world>
- Kldiashvili, G.** (2012, October 15). The President in Opposition: Georgia's 2012 Parliamentary Elections. Center for Security Studies <https://css.ethz.ch/content/dam/ethz/special-interest/gess/cis/center-for-securities-studies/pdfs/CAD-43-2-5.pdf>
- Staff, S.** Did Saakashvili lie? The West begins to doubt Georgian leader (2008, September 16).
<http://www.spiegel.de/international/world/did-saakashvili-lie-the-west-begins-to-doubt-georgian-leader-a-578273.html>
- UAClub.net** Russia-Georgia (2010). http://news.uaclub.net/26_319203.html

ԱՄՓՈՓՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ. ԱՐԽԱԳԻԱՅԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԵԹԻԱՅԻ ՕՐԻՆԱԿԸ ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

Վրաստան-ՌԴ հարաբերությունների բնույթը և քաղաքական խնդիրները հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ, թե կողմերի միջև քաղաքական հարցերում ինչպիսի գարգացումներ են եղել, որոնք ազդել են ոչ միայն երկկողմ հարաբերությունների վրա, այլ ամբողջ տարածաշրջանի վրա: Աշխարհաքաղաքական գարգացումները ուկրայինական ճգնաժամով և ԱՄՆ նոր վարչակազմի քաղաքականությամբ պայմանավորված ազդել են նաև Հարավային Կովկասի վրա: Հոդվածի նպատակն է քննարկել, թե ինչպե՞ս փոխվեց Վրաստան-ՌԴ հարաբերությունների բնույթը (Արխագիայի և Օսեթիայի օրինակը) և ինչո՞ւ Վրաստանի առաջատար տնտեսական գործընկերներից ՌԴ-ի հետ հարաբերություններում քաղաքական առաջընթաց չի նկատվում: Քննարկում ենք նաև Վրաստան-ՌԴ հարաբերություններում քաղաքական խնդիրների բնույթը և աշխարհաքաղաքական գարգացումների ֆոնին հնարավոր գարգացումները:

Այս գիտական աշխատությունը գրելու ընթացքում օգտագործվել են համակարգված մեթոդներ՝ պատմական-համեմատական, իրադարձությունների և բովանդակության վերլուծություն: *Ձեռքբերումները:* Վրաստանի և Ռուսաստանի միջև տնտեսական հարաբերությունների դինամիկ գարգացումը Վրաստանի «Վրացական երազանք» կուսակցության կառավարության օրոք չի հանգեցրել քաղաքական դրական փոփոխությունների՝ ոչ մի կողմի համար: Ռուսական գործերի շարունակական ներկայությունը Վրաստանի տարածքներում լուրջ խոչընդոտ է Վրաստան-Ռուսաստան հարաբերությունների բարելավման համար՝ առանց որևէ լուծման հեռանկարի: Արխագիայի և Հարավային Օսեթիայի հարցերում կողմերի հակադիր կարծիքները շարունակվում են սրել լարվածությունը և խանգարել երկկողմ դիվանագիտական հարաբերություններին:

Բանալի բառեր՝ Վրաստան, Ռուսաստան, Արխագիայի և Հարավային Օսեթիայի հակամարտություն, երկկողմ հարաբերություններ, տարածաշրջան, բազմակողմ դիվանագիտություն, քաղաքականություն:

РЕЗЮМЕ
ГЕОПОЛИТИЧЕСКИЕ СТОЛКНОВЕНИЯ В ОТНОШЕНИЯХ ГРУЗИИ И
РОССИИ: СЛУЧАЙ АБХАЗИИ И ЮЖНОЙ ОСЕТИИ
КАРЕН КАЗАРЯН

Для понимания характера отношений между Грузией и Россией и политических проблем, с ними связанных, необходимо проанализировать политические события, которые оказали влияние не только на двусторонние отношения, но и на всю региональную ситуацию. Геополитические события, особенно украинский кризис и политика новой администрации США, также оказали значительное влияние на Южный Кавказ. *Цель* данной статьи — исследовать эволюцию грузино-российских отношений (на примере Абхазии и Осетии) и выяснить, почему, несмотря на роль России как одного из ведущих экономических партнёров Грузии, политического прогресса достигнуто мало? В статье также рассматриваются ключевые политические вопросы, лежащие в основе отношений между Грузией и Россией, а также возможные будущие развития событий с учётом глобальных геополитических изменений."

В процессе написания научной работы использовались системные методы, такие как историко-сравнительный анализ, анализ событий и контент-анализ. *Достижения.* Динамичное развитие экономических отношений между Грузией и Россией при правительстве «Грузинской мечты» не привело к позитивным политическим изменениям для обеих сторон. Продолжающееся присутствие российских войск на территории Грузии остается серьезным препятствием для улучшения отношений между Грузией и Россией, и в будущем не ожидается разрешения этого вопроса. Противоречивые взгляды сторон по вопросам Абхазии и Южной Осетии продолжают усиливать напряженность и осложнять дипломатические отношения между двумя странами.

Ключевые слова: Грузия, Россия, конфликт в Абхазии и Южной Осетии, двусторонние отношения, регион, многосторонняя дипломатия, политика.

Հոդվածը ներկայացվել է՝ 04.03.2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 15.04.2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 05.05.2025

**ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ԼԱՍՍՈՒԵԼԻ ՄՈԴԵԼԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ**

ԱՆՆԱ ՄԻՍՈՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Էլ. *huughe`* anna.sisoyan@ysu.am

ԱՄՓՈՓՈՒՄ

Տեղեկատվական պատերազմների կարևորագույն բաղադրիչն է քարոզչությունը: Դարեր շարունակ քարոզչությունը կիրառվել է սեփական դիրքերի ամրամպնդման, լայն շրջանակներին որոշակի նպատակի շուրջ համախմբելու, հակառակորդին վարկաբեկելու, սեփական նպատակները հնարավորինս անխոչընդոտ առաջ տանելու և այլ նպատակներով: Կարևորվում է քարոզչական գործոնը հատկապես պատերազմական գործողություններին նախորդող շրջանում և հենց պատերազմների ժամանակ: Մեծածավալ քարոզչական աշխատանքներ են տարվել Առաջին, Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ և դրանց նախորդող շրջանում: Կորեական, Վիետնամական պատերազմների ժամանակ ահռելի աշխատանք է կատարել ամերիկյան քարոզչամեքենան: Մեր օրերում էլ քարոզչական դիմակայություն դրսևորումներ եղան 2008թ. վրաց-ռուսական պատերազմի, 2014թ. Դրիմի ճգնաժամի ժամանակ, 2016թ. հայ-ադրբեջանական Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ, 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ, և ներկայումս քարոզչությունը ամբողջ թափով կիրառվում է ռուս-ուկրաինական պատերազմին գուզընթաց: Ուստի պատերազմական շրջանում քարոզչական մեխանիզմների ուսումնասիրությունը ունի կիրառական նշանակություն:

Հոդվածի նպատակն է վերլուծել պատերազմական շրջանի քարոզչության առանձնահատկությունները՝ ոլորտի խոշոր տեսաբաններից Հ. Լասսուելի առաջ քաշած մոտեցումների հիման վրա՝ հայ-ադրբեջանական պատերազմներում համանման դրսևորումների օրինակներով: Հոդվածում տրվում են քարոզչության վերաբերյալ առավել տարածված սահմանումներն ու բնութագրումները, այնուհետև անդրադարձ է կատարվում Լասսուելի «Համաշխարհային պատերազմի քարոզչական մեխանիզմները» գրքում տեղ

գտած մոտեցումներին: Հատկանշական է, որ թեև աշխատանքը գրվել է 20-րդ դարի առաջին կեսում, սակայն աշխատանքում նկարագրված պատերազմական շրջանի քարոզչական մեխանիզմները արդիական և կիրառելի են մինչ օրս:

***Բանալի բառեր՝** քարոզչություն, պատերազմ, համոզում, Լասսուել, Հայաստան, Ադրբեջան, տեղեկատվական պայքար:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քարոզչությունը հաճախ է կիրառվում քաղաքականության մեջ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական խնդիրներ լուծելու նպատակով: Հատկապես պատերազմական շրջանում այն հանդիսանում է կարևորագույն գործիք, որի ճիշտ կիրառումը կարող է զգալի ազդեցություն ունենալ պատերազմի արդյունքի վրա:

Քարոզչությունը սահմանվում է որպես հասարակական կարծիքի վրա ազդելու նպատակով տեղեկատվության՝ փաստերի, փաստարկների, ասեկոսների, կիսաճշմարիտ կամ սուտ լուրերի տարածում: Հաճախ այն փոխանցվում է զանգվածային լրատվության միջոցներով:

Քարոզչությունը իրենից ներկայացնում է համակարգված ջանքեր՝ մանիպուլացնելու միջոցով ազդելու այլոց համոզմունքների, վարքագծի կամ գործողությունների վրա, օգտագործելով սիմվոլներ՝ բառեր, ժեստեր, պատկերներ, երաժշտություն, հագուստ և այլն: Դիտավորությունը և մանիպուլյացիայի վրա շեշտադրումը տարբերակում են քարոզչությունը առօրեական խոսակցությունից կամ սովորական տեղեկատվության փոխանակումից: Քարոզչություն իրականացնող կողմը հետապնդում է որոշակի նպատակ: Նպատակին հասնելու համար ընտրվում են փաստեր, փաստարկումներ, խորհրդանիշեր և դրանք ներկայացվում են այնպես, որպեսզի ունենան առավելագույն ազդեցություն: Ազդեցությունը առավելագույնի հասցնելու համար հաճախ բաց են թողնվում կամ խեղաթյուրվում են փաստերը, երբեմն էլ կիրառվում է սուտը՝ շեղելու համար ռեակտորների (քարոզչության թիրախի) ուշադրությունը այն ամենից, ինչը իրենց քարոզչության շրջանակներում չէ (Smith and Lannes, 2025):

Չնայած քարոզչությունը բնութագրող վերընշված և մյուս բնութագրիչներին, չկա հստակ սահմանում կամ մոտեցում, թե ինչ է այն: Հեղինակներ Գ. Ջոեթն ու Վ. Օ'Դոնելը իրենց գրքում անդրադարձ կատարելով քարոզչության հասկացությանը նշում են, որ սկզբնական շրջանում քարոզչությունը համարվում էր չեզոք երևույթ, սակայն ժամանակի ընթացքում այն ստացավ բացասական հնչերանգ: Հաճախ քարոզչությունն օգտագործվում է բացասական կամ ոչ ձեռնտու տեղեկատվության ազդեցությունը նվազեցնելու կամ էլ իրողությունները ցանկալի լույսի տակ ներկայացնելու համար (Jowett, O'Donnell, 2006):

Պատերազմական շրջանի քարոզչական մեխանիզմներին ընդգրկումն անդրադարձ է կատարում ոլորտի նշանավոր տեսաբաններից Հ. Լասսուելը իր «Համաշխարհային պատերազմի քարոզչական մեխանիզմները» գրքում՝ նկարագրելով և վերլուծելով պատերազմող կողմերի իրականացրած քարոզչական մեխանիզմները Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Թերևս մոտեցումների խորությամբ Լասսուելի դասակարգումները ներկայումս էլ շարունակում են մնալ արդիական: Այդ է պատճառը, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղ գտած քարոզչական դրսևորումները ունեն ընդհանրություններ հայ-ադրբեջանական տեղեկատվական պայքարում կիրառվող դրսևորումների հետ: Ուստի Լասսուելի առաջ քաշած մոդելու ուսումնասիրությունը թույլ կտա ոչ միայն համեմատության իրականացնել, այլ նաև իրականացնել վերլուծություն, թույլ և ուժեղ կողմերի վերհանում, ինչն էլ իր հերթին կարող է օգտակար լինել ընթացող տեղեկատվական պայքարի ճիշտ ուղղորդման համար:

Լասսուելը, թեև ոչ դասակարգված, իր աշխատության մեջ առանձնացնում է այն տեխնիկաները կամ մեթոդները, որոնք ղեկավարությունները կիրառում են պատերազմների ժամանակ:

Հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում կիրառվել են մի շարք քարոզչական գործիքակազմեր, որոնց ուսումնասիրությունը Լասսուելի առաջ քաշած մոտեցումների համատեքստում հնարավորություն կտա առավել խորը վերլուծել կիրառվող և կիրառվելիք քարոզչական տեխնիկաները, ինչն էլ իր հերթին կօգնի ոչ միայն արդյունավետ քարոզչության իրականացման մեխանիզմների, այլ նաև հակառակորդի քարոզչության չեզոքացմանն ուղղված մեթոդների վերհանմանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Անդրադարձ կատարելով Առաջին Համաշխարհային պատերազմին և առհասարակ քարոզչությանը պատերազմական շրջանում, Լասսուելը նշում է, թե պետք է հասկանալ, որ պատերազմական շրջանում մարդկանց և նյութական միջոցների մոբիլիզացումը բավարար չէ. պետք է նաև կարծիքների մոբիլիզացում: Ուստի կարծիքի վրա իշխանությունը, ինչպես

Ե

ա

ն

ք

ի

և

գ

ԽՆԿատի է առնվում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ

Լ

Ե

ք

Ատելության մոբիլիզացիա

Լասսուելը առանձնացնում է պատերազմական շրջանում հակառակորդի բացարձակ բացասական կերպարի ստեղծմանը, այնպիսի մեխանիզմների կիրառմանը, որի արդյունքում հասարակությունը կսկսի անվերապահորեն ատել հակառակորդին: Լասսուելը առաջ է քաշում մարդկանց ատելության մոբիլիզացիայի կոնցեպտը, որը ենթադրում է այնպես անել, որ ողջ մեղքն ու պատասխանատվությունը ընկնի հակառակորդի վրա: Ինչպես նաև պատկերավոր ներկայացնում է այն իրավիճակը, երբ դժբախտության մեջ հայտնված մարդիկ որոնում են քավության նոխագներ և փրկիչներ, ինչը լայն հնարավորություններ է ստեղծում քարոզչություն իրականացնողների համար:

Քարոզչության այս մեթոդը տասնամյակներ շարունակ պետական մակարդակով կիրառվում է Ադրբեջանի կառավարության կողմից ոչ միայն պատերազմական շրջանում: Ադրբեջանում հայատյացությունը դարձել է պետական քաղաքականության մաս և այդ ուղղությամբ քարոզչություն է իրականացվում անգամ կրթական հաստատություններում:

Ադրբեջանում հայատյացության քարոզը և դրսևորումները լայնորեն փաստագրված են: Օրինակ, 2004թ. ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Հունգարիայում տեղի ունեցած դասընթացի ժամանակ ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովը կացնահարեց քնած հայ սպա Գուրգեն Մարգարյանին: Սաֆարովը հետագայում արտահանձնվեց Ադրբեջան, որտեղ նրան շնորհվեց ազգային հերոսի կոչում պատերազմի ընթացքում արձանագրվել են հայ զինվորների և քաղաքացիական անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի և խոշտանգումների դեպքեր, որոնք ներկայացվել են միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներում: Ի հակադրություն սրա հայկական կողմում որպես այդպիսին բացակայում է համակարգված ատելության քարոզն ընդդեմ Ադրբեջանի: Հատկապես պատերազմական շրջանում հակաադրբեջանական տրամադրությունների սրումը ավելի շուտ բնական ռեակցիա է կատարվող վայրագություններին, քան համակարգված քարոզչության արդյունք: Անհերքելի է, որ հակամարտության ողջ ընթացքը ուղեկցվում է երկուստեք ատելության դրսևորումներով, սակայն ի տարբերություն ադրբեջանական ուղղորդվող և հրահրվող ատելության հայկական կողմում այն հանդիսանում է փաստական իրողությունների արձագանք, որին, իհարկե նպաստում է տեղեկատվության համապատասխան կերպով մշակումն ու լայն շրջանակներին մատուցումը:

Պատերազմը արդարացնելը

Ռազմական գործողությունների նախապատրաստումը ևս իրենից ենթադրում է հսկայածավալ քարոզչական աշխատանք: Քարոզչություն իրականացնողների համար կարևոր է հասկանալ, թե ինչ գաղափարախոսական ազդեցություն ունեցող

հասարակության հետ է աշխատանքը. սովորաբար լիբերալ գաղափարներով հասարակությունը և միջին դասակարգի մարդիկ հավանություն են տալիս քաղաքական կամ իրավաբանական նպատակներ հետապնդող ռազմական գործողություններին, մինչդեռ տնտեսական բարօրության ձգտող հասարակության համար առավել ընդունելի են տնտեսական շահեր հետապնդող ռազմական գործողությունները (Лaceyял, 2021):

Հայ-ադրբեջանական տեղեկատվական պայքարը, հատկապես պատերազմական շրջանում ընդգրկում է նշված մոտեցումները՝ հասարակության համար պատերազմի պատճառները բացատրելու համատեքստում:

- Ադրբեջանի պետական քարոզչությունը ներկայացնում է հայերին որպես «գրավողներ» և «թշնամիներ», ինչը նպաստում է ռազմական գործողությունների արդարացմանը հասարակության շրջանում:
- Ադրբեջանը պնդում է, որ Արցախը (Լեռնային Ղարաբաղը) իր միջազգայնորեն ճանաչված տարածքի մասն է, ուստի 2020 և 2023 թվականների ռազմական գործողությունները ներկայացնում է որպես «ահաբեկչության դեմ պայքար» և
- Նկրտումները ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ հիմնավորվում են

Այս առումով հայկական քարոզչության առջև դրված խնդիրը ոչ թե նոր թեզերի մշակումն է, այլ ադրբեջանական թեզերի հակադարձումը: Հայկական կողմի քարոզչական խնդիրները այս համատեքստում այլ են.

- Արցախյան շարժման սկզբից ի վեր հայկական կողմը միջազգային հանրությանը ներկայացնում էր Արցախի ժողովրդի ինքնորոշման օրինականությունը:
- Հայկական քարոզչությունը շեշտում էր, որ հայերը պայքարում են ֆիզիկական ոչնչացման դեմ և առհասարակ ողջ պայքարը ներկայացվել և շարունակում է ներկայացվել որպես հանուն մարդու հիմնարար իրավունքների պայքար:

Երկուստեք այս թեզերը շարունակություն գտան թե՛ Արցախյան հակամարտության սառեցված փուլում, թե՛ 2016թ. Ապրիլյան պատերազմից 2020թ. 44-օրյա պատերազմն ընկած հատվածում և պատերազմից հետո:

Հակառակորդի դեմոնիզացիա

Թշնամու դեմոնիզացիային վերաբերող գլխում Լասուելն ընդգծում է, որ քարոզչություն իրականացնողը կարող է իր առաջադրանքը կատարված համարել, երբ հասարակությունը վստահ է լինում, որ հենց հակառակորդն է սկսել պատերազմը և խոչընդոտում է հարատև, շահավետ և աստվածահաճո խաղաղությանը: Պետք է ամեն ինչ անել ցույց տալու համար, որ թշնամին ընդունակ է այնպիսի հրեշավոր բանի, ինչպիսին

ագրեսիվ պատերազմն է, ինչի արդյունքում էլ առաջ է գալիս մի հոգեբանական արձագանքի օղակ, որտեղ մեղավորները դեմոնիզացվում են, իսկ դեմոնիզացվածները մեղավոր են: Շատ կարևոր է նաև հակառակորդի քարոզչությունը որպես կեղծիք ներկայացնելը և քարոզչության միջոցով դաշնակիցներին աջակցելը: Թշնամու դաժան կերպարը ներկայացնելու համար հաճախ շեշտը դրվում է խաղաղ բնակչության, կանաց, երեխաների, ծերերի, հոգևորականների նկատմամբ կատարած վայրագությունների վրա: Ըստ անհրաժեշտության տարածվում են դաժան կադրերը պատկերող նկարներ: Պատերազմական շրջանում կամ դրանից դուրս կարևոր է հավաքել հակառակորդի ստեղծված բացասական տրամադրվածությունը հակառակորդի հանդեպ վառ պահելու համար (Лассыэлл, 2021):

ԽՍՀՄ փլուզման նախօրեին Ադրբեջանում հակահայկականությունը վերստին ակտուալացավ ԼՂՀՄ կարգավիճակի հետ կապված հիմնախնդրի համատեքստում: 1988-հրահրվեցին և ընթացան ադրբեջանական հասարակության ներսում հատուկ կերպով շրջանառվող ապատեղեկատվության համատեքստում, ըստ որի՝ հայերը ադրբեջանցիների նկատմամբ: ԽՍՀՄ փլուզումից հետո ադրբեջանական տեղեկատվական քաղաքականությունը այս համատեքստում ավելի ակտիվացավ:

թթ. փուլի տեղեկատվական քաղաքականության նպատակներն էին՝

- Հանրային կարծիքի համախմբումը «ծավալապաշտական» նկրտումներ ունեցող «հայ անջատողականների» և «ագրեսորների» դեմ պայքարում,
- Հայկական զինված ուժերի կողմից «բռնագավթված» տարածքների «ազատագրման» և մոտալուտ հաղթանակի անխուսափելիության գաղափարների ներդրումը հասարակական գիտակցությունում:

Հայկական և ադրբեջանական կողմերի միջև 1994 թվականի հրադադարի կնքումից սկսած՝ տեղեկատվական քաղաքականությունը, մնալով կոնֆլիկտային հաղորդակցման տրամաբանության շրջանակներում, մտավ նոր՝ հետպատերազմյան շրջան:

Երկրորդ՝ 1995-1997թթ. ընդգրկող փուլում Բաքվի քարոզչության նպատակը միջազգային հանրության միջոցով պատերազմի հետևանքների վերացումն էր, զինադադարի երկարաձգումը և փախստականների սոցիալական խնդիրների բարձրաձայնումը: Հայաստանը ներկայացվում էր որպես «ոճիրների ունակ» երկիր, որը Սփյուռքի օգնությամբ կարողացավ «գրավել» ադրբեջանական տարածքները:

թթ. Ադրբեջանում սկսվեց տեղեկատվական գործողությունների ռազմավարական մեթոդների ակտիվ փնտրտուք, որը կարելի է առանձնացնել որպես երրորդ փուլ:

Մասնավորապես կրկնապատկվեց Խոջալուի իրադարձությունների ժամանակ ադրբեջանցի և թուրք մեսիսերի գոհերի թիվը: Այս քայլի տրամաբանական շարունակությունը դարձավ մեկ ամիս անց, 1998թ. մարտին Հեյդար Ալիևի կողմից

Հաջորդ շրջանը սկսվեց 2003 թվականից, երբ Ադրբեջանի նախագահի պաշտոնում Հեյդար Ալիևին փոխարինեց նրա որդին՝ Իլհամը, և շատ արագ նոր որակ ու շեշտադրումներ ներմուծեց գործընթացում: Ադրբեջանի ղեկավարության համար տեղեկատվական հարձակման ուղղակի թիրախ դարձան ՀՀ-ն, ԼՂՀ-ն և Հայությունը՝ հանրային կարծիքը նորովի կերտելու և նրա զարգացման հիմնական միտումները կանխորոշելու համար: Հայաստանը և Հայությունը ներկայացվեցին որպես «գոյատևման սպառնալիքներ» ադրբեջանական հասարակության ու նրա անվտանգության համար

Հաջորդող ժամանակահատվածում այս թեզերը սկսեցին ակտիվորեն շրջանառվել, դե իսկ պատերազմական շրջաններում էլ հայերը շարունակում էին մեղադրվել վայրագությունների մեջ:

Հակառակորդի դեմոնիզացիայի հարցում էլ, հայկական կողմի մոտեցումները առավելապես արձագանքողական են: Բաքվի, Կիրովաբադի, Սումգայիթի ջարդերից հետո աստիճանաբար սկսեց ձևավորվել հակառակորդի որպես բիրտ ու դաժան թշնամու կերպարը, ով չի խնայում անգամ խաղաղ բնակիչներին, ինչը, սակայն ավելի շատ փաստերի վերհանում էր, քան հակառակորդի դեմոնիզացիային ուղղված թիրախային քայլ:

Թ. Ապրիլյան պատերազմի սկզբից հայկական լրատվամիջոցները խոսում էին խաղաղ բնակչության նկատմամբ կատարված ոտնձգություններից, հատկապես հիշատակվում էր ադրբեջանցի զինյալների կատարած խոշտանգումները հայկական բնակավայրերում, ինչպես նաև այն, թե ինչպես է հակառակորդը վարվում զոհվածների դիերի հետ:

Թ. պատերազմի ժամանակ հայ աղբյուրները մեծ ուշադրություն դարձրեցին ադրբեջանցի զինվորների կողմից կատարված պատերազմական հանցագործություններին՝ հատկապես գերիների խոշտանգման և գլխատման դեպքերին: Հայկական մեդիան կենտրոնացավ նաև ադրբեջանական բանակի՝ հատկապես սիրիացի վարձկանների օգտագործման վրա, ներկայացնելով Ադրբեջանին որպես ահաբեկիչների հովանավոր (BBC, 2020): Ինչպես նաև բարձրաձայնվում էր ոչ թույլատրելի միջոցների, մասնավորապես ֆոսֆորային զինատեսակների կիրառության, ռազմական հանցագործությունների մասին (France 24,

Հայկական կողմից միշտ խոսվել է հակառակորդի կողմից համակարգված կերպով հայկական մշակույթային ժառանգության ոչնչացման մասին (օրինակ՝ Ջուղայի

խաչքարերի ոչնչացումը 2005-ին): 2020թ. պատերազմից ու հատկապես Արցախի հայաթափումից հետո շարունակվում է բարձրաձայնվել հայկական մշակությանին կոթողների ավերման մասին (Մելքումյան, 2020):

Ներկայումս խոսվում է Ադրբեջանում պահվող հայ գերիների նկատմամբ կիրառվող անմարդկային կտտանքների մասին: Ինքնին այն փաստը, որ դեռ Ադրբեջանը պահում է հայ գերիների, իրականացնում կասկածելի դատավարություններ կեղծ մեղադրանքներով, խոչընդոտում է Կարմիր խաչի միջազգային կազմակերպության աշխատանքներին, արդեն իսկ ոչ թե քարոզչական, այլ փաստական նյութ է, որը անգամ ոչ թիրախային կիրառման դեպքում նպաստում է հակառակորդի դեմոնիզացված կորպարի ստեղծմանը:

Լիդերների դեմոնիզացիա

Քարոզչության իրականացման տեսանկյունից Լասսուելը առանձնացնում է նաև անհատների, մասնավորապես հակառակորդի լիդերների նկատմամբ աստվության բորբոքումը՝ նրանց վերագրելով հնարավոր բոլոր մահացու մեղքերը (Лассуэлл, 2021):

Ադրբեջանական քարոզչությունը պարբերաբար փորձում է ներկայացնել Հայաստանի ղեկավարներին որպես պատերազմ հրահրողներ, ովքեր ատում են ադրբեջանցիներին: Հայաստանի ղեկավարները հաճախ ներկայացվում են որպես լիդերներին ներկայացնում է որպես ֆաշիզմի հովանավորներ, ռազմական հանցագործներ:

Հայաստանում և Արցախում Իլիամ Ալիևի կերպարը ներկայացվել է որպես ավտորիտար ղեկավար, պատերազմահրավեր գործիչ և հայաստանի տարածող իշխանության ժառանգականության և խավիարային դիվանագիտության մասին տեղեկությունները: Հայկական կողմը նրան ներկայացնում է որպես Արցախի պատերազմներում քաղաքացիական բնակչության դեմ ռազմական հանցագործությունների գլխավոր պատասխանատու:

Մարտական ոգու պահպանում

Այս ամենին զուգահեռ անհրաժեշտություն կա պահպանել ազգի մարտական ոգին: Ըստ հեղինակի անհրաժեշտ է պահպանել հաղթանակի պատրանքը: Կախված հակառակորդից բերվում են փաստարկներ թե՛ հակառակորդի, թե՛ սեփական ուժեղ կողմերի մասին: Հաճախ սեփական հաղթանակը ներկայացվում է որպես բարու հաղթանակ և Աստծո կամք, պատերազմը ներկայացվում է որպես բարու և չարի պայքար: Հաճախ պատերազմում ձախողումները ներկայացվում են որպես ժամանակավոր անհաջողություն, կամ պատիժ նախկինում գործած մեղքերի համար և քավություն հետագայում փառքի հասնելու համար: Երբեմն սեփական թուլությունները թաքցնելու համար ուժնացվում է հակառակորդի ուժը կամ տեղի ունեցածին հաղորդվում է

անսպասելիության բնույթ: Երբեմն էլ հանկարծակիությունը արդարացնելու համար առաջ է քաշվում հակառակորդի լրտեսների ազդեցությունը: Սա մի հանգամանք է, որը հասարակության մոտ առաջացնում է վտանգավոր իրավիճակում համատեղ գործելու անհրաժեշտության զգացողություն: Հանկարծակի հարձակման տեսությունը ուղեկցվում է հակառակորդին փայլուն հակահարված տալու թեզով: Ինչպես նաև ոչ ցանկալի վատատեսությունից խուսափելու համար անհրաժեշտ է սեփական հաղթանակի վրա չկասկածելու թեզերի տարածումը, որը հիմնավորվում է մարդկային, նյութական ռեսուրսներով, արտաքին բարեկամական կապերով: Հաճախ էլ արվում են հետևյալ բնույթի հայտարարություններ՝ «պատերազմը կավարտենք այն ժամանակ, երբ կհասնենք մեր նպատակին»:

Պատերազմական շրջանում քարոզչություն իրականացնելիս անհրաժեշտ է ճիշտ հաշվարկել կորուստների մասին լուրերի հաղորդումը: Ըստ Չերչիլի մոտեցման վատ լուրեր ստանալու դեպքում անհրաժեշտ է սպասել, մինչ կգան լավ լուրերը, որից հետո դրանք կիրապարակվեն միաժամանակ (Лассуэлл, 2021):

Անդրադառնալով հայ-ադրբեջանական հակամարտությանը, կարելի է նշել, որ Լասսուելի առաջ քաշած այս կետերը ամբողջությամբ համապատասխանում են երկուստեք մարտական ոգու բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքների մեթոդաբանությանը: Այս շեշտադրումներով քարոզչական դրսևորումները հատկապես ցայտուն էին արտահայտված 2020թ. պատերազմի ընթացքում: Ադրբեջանական կողմը հենվում էր հետևյալ կետերի վրա՝

Ադրբեջանը վերականգնում է իր պատմական արդարությունը»:

- Ադրբեջանն ունի տարածքային ձեռքբերումներ (նույնիսկ եթե դրանք մարտավարական նշանակություն չունենին):
- Հայերը «զավթիչներ» են:
- Ադրբեջանի իշխանությունները պատերազմի ընթացքում գրեթե չէին հաղորդում զոհերի մասին, իսկ իրական թիվը հայտարարվեց միայն պատերազմից հետո:
- Ներկայացվում էր, թե ինչպես «անօդաչու թռչող սարքերը վերացնում են հայերի դիրքերը»՝ հասարակության մոտ այն տպավորությունը ստեղծելով, որ մարդկային կորուստները քիչ են:
- Նույնիսկ զոհերի առկայության դեպքում Ալիևը շեշտում էր, որ «այս հաղթանակը փոխհատուցում է բոլոր զոհերը»:

Հայկական կողմում մարտական ոգու պահպանումը իրականացվում էր հիմնականում հետևյալ մեթոդներով՝

- Հայկական մեդիայում գոհված զինվորները ներկայացվել են որպես «հերոսներ» և
- Նույնիսկ բարդ իրավիճակներում հաղորդվում էր, որ «հակառակորդն ավելի մեծ կորուստներ ունի» և որ «հաղթանակն անխուսափելի է»:
- Ինչպես 2020 թվականի, այնպես էլ 2016 թվականի պատերազմների ընթացքում հասարակության մոտ պահպանվում էր «միասնականության» գաղափարը, կամավորների հոսքը ներկայացվում էր որպես «հայկական դիմադրության ոգու» արտահայտություն:
- Ադրբեջանական բանակը ներկայացվում էր որպես անփորձ, վարձկանների վրա հիմնված, իսկ ադրբեջանցի զինվորները՝ որպես «մարտական ոգի չունեցող»:
- թ. պատերազմի ընթացքում հայկական մամուլը հաճախ ներկայացնում էր, թե ինչպես
- Շատ դեպքերում գոհվածների իրական թիվը հայտարարվում էր ուշացումով՝ խուճապից խուսափելու համար:
- Նույնիսկ երբ հայկական կողմը նահանջում էր, դա ներկայացվում էր որպես «նոր պաշտպանական գծերի ամրապնդում»:

Չինատեսակների պայքարը

Կարևորվում է նաև նոր զինատեսակների կիրառման ճիշտ ներկայացումը: Հաճախ նոր զինատեսակի կիրառումը ներկայացվում է որպես հաղթանակի երաշխիք, միևնույն ժամանակ հակառակորդի կողմից նոր զինատեսակների կիրառումը ներկայացվում է որպես հանցագործություն մարդկության դեմ: Երբեմն իրենց կողմից նոր զինատեսակի կիրառումը ներկայացվում է որպես հակառակորդի կիրառած այս կամ այն զինատեսակին պատասխան (Лассуэлл, 2021):

Չինատեսակների առումով 2016թ. պատերազմի ընթացքում հայկական կողմում սռաջացավ որոշակի խուճապ՝ կապված Ադրբեջանի կողմից դրոնների կիրառության հետ: Հայկական կողմը մեղմելու համար այդ խուճապային մթնոլորտը, նախ լայնորեն տարածում էր դրոնները խոցելու մասին լուրերը, հատկապես եթե դա կատարվել էր սովորական զինատեսակներից, այնուհետև սկսեցին շրջանառվել հայկական կողմից կիրառվող դրոնների մասին լուրերը: Պատերազմից հետո պարբերաբար հաղորդվում էր զինանոցը դրոններով համալրելու, սեփական դրոնային արտադրություն ունենալու մասին մասին: Ադրբեջանական կողմում 2020թ. «Բայրաքթար» ԱԹՄ-ների օգտագործումը ներկայացվում էր որպես հայերի դեմ «բացարձակ հաղթանակի» մեխանիզմ (Soylu, 2020): Հայկական կողմում 2020թ. պատերազմի ընթացքում փորձ էր արվում ներկայացնել հայկական հարվածային ԱԹՄ-ների կիրառումը որպես ադրբեջանական ուժերին զգալի

հարված հասցնող գործոն: Աղբբեջանական կողմը հայկական կողմից արձակված հրթիռները (օրինակ՝ «Սմեր») ներկայացնում էր որպես անմեղ բնակչության վրա իրականացված հարձակում: Հայկական կողմը Աղբբեջանին մեղադրում էր կասետային և ֆոսֆորային զինատեսակների կիրառման մեջ, ինչը ներկայացվում էր որպես պատերազմական հանցագործություն: Հայկական կողմից նաև հաճախ էր շեշտվում Թուրքիայից, Իսրայելից և այլ երկրներից Աղբբեջանին տրվող ռազմատեխնիկական օգնության մասին, հաճախ էլ արծարծելով այն թեզը, թե աղբբեջանական կողմը ինքնուրույն չի կարողանում գլուխ հանել և Աղբբեջանը դիմանում է զուտ դաշնակիցների աջակցության շնորհիվ:

Ղաշնակիցների հետ հարաբերություններ

Պատերազմական շրջանում իրականացվող կարևորագույն քայլերից է դաշնակիցների հետ բարեկամական հարաբերությունների պահպանումը, ամրապնդումը, նոր դաշնակիցներ ու աջակիցներ ձեռք բերելու, միևնույն ժամանակ հակառակորդի դաշնակցային կապերը խարխալելու ուղղությամբ ջանքեր գործադրելը: Այս ամենն, իհարկե, պետք է ուղեկցվի քարոզչական արշավներով (Лассуэлл, 2021):

Աղբբեջանը ոչ միայն դաշնակիցներ գրավելու, այլ նաև միջազգային հանրության առաջ սեփական գործողությունները արդարացնելու, մեղադրանքներից խուսափելու համար ներկայացնում էր Ղարաբաղի հարցը որպես օկուպացիայի խնդիր, ոչ թե ազգերի ինքնորոշման իրավունք: Աղբբեջանի քարոզչությունն Արևմուտքում փորձում էր համեմատել իր դիրքը այլ տարածքային վեճերի հետ, օրինակ՝ Ուկրաինայի դիրքորոշման հետ Դոնբասի հարցում: Աղբբեջանը միջազգային հարթակներում փորձում էր Հայաստանին ներկայացնել որպես օկուպանտ, շեշտելով փախստականների թեման: Այս ամենին զուգահեռ տարվում էր լուրջ դիվանագիտական աշխատանք՝ տարբեր երկրներից կորզելու համար հնարավորինս ձեռնտու դիրքորոշում: Պատերազմի ընթացքում Աղբբեջանն ուներ բացահայտ ռազմական աջակցություն Թուրքիայից, որն ապահովում էր ԱԹՄ-ներ, ռազմական ուսուցում և զինատեսակներ: Իսրայելը մատակարարել է բարձր տեխնոլոգիական զենքեր, այդ թվում՝ կամիկաձե ԱԹՄ-ներ: Պակիստանը արտահայտել է քաղաքական աջակցություն Աղբբեջանին և հրաժարվել է դիվանագիտական հարաբերություններից Հայաստանի հետ:

Հայկական կողմը միջազգային հանրությանն առաջարկում էր ընկալել Արցախը որպես ինքնորոշման իրավունք ունեցող ժողովուրդ, համեմատելով այն Կոսովոյի, Շոտլանդիայի կամ այլ անկախության շարժումների հետ: Հայկական կողմը փորձում էր ցույց տալ, որ Արցախը պատմականորեն հայկական տարածք է, ինչը նպաստում էր միջազգային աջակցությանը: Հայկական կողմի քարոզչության մեջ շեշտադրվում էր, որ Աղբբեջանը Թուրքիայի խամաճիկն է, իսկ Թուրքիան՝ Օսմանյան կայսրության

քաղաքականության շարունակողը, ինչը Արևմուտքում հավելյալ զգայունություն էր առաջացնում:

Հանդիսանալով ԵԱՏՄ և ՀԱՊԿ անդամ, Հայաստանը դաշնակցային օգնություն էր ակնկալում Ռուսաստանից, սակայն Ռուսաստանը Արցախի հարցում երբեք ուղղակի ռազմական աջակցություն չի ցուցաբերել: Իրանի աջակցությունը ևս գործուն չի եղել. թեև հայտարարությունները բարեկամական էին, սակայն որևէ փաստական աջակցության դեպք չի գրանցվել: Ֆրանսիան հատկապես 2020թ. պատերազմի ընթացքում Բաքվի և Անկարայի դեմ կոշտ դիրքորոշում ուներ: Հունաստանը, Կիպրոսը, Սիրիան, ինչպես նաև Լատինական Ամերիկայի որոշ երկրների պատմականորեն աջակցել են Հայաստանին, սակայն դա առավելապես բարոյահոգեբանական աջակցությամբ է դրսևորվել:

Հակառակորդի բարոյալքումը

Լաստուելի աշխատության հաջորդ գլուխը նվիրված է պատերազմի ժամանակ հակառակորդի բարոյալքմանը, որի հարցում քարոզչությունը բնականաբար անփոխարինելի դեր է խաղում: Դեկարտը է արվել մի շարք միջոցներով, ինչպես օրինակ, ցույց տալով որ սեփական զինվորները մարդասիրաբար են վերաբերվում հակառակորդի զերիններին, խաղաղ բնակչությունն: Ի հակառակ սրան հակառակորդի տարածած լուրերը, թե թշնամին դաժան գործողություններ է կատարել, կամ կատարում, պետք է հերքվեն կամ ներկայացվեն, որպես պատերազմի ժամանակ կատարված անհրաժեշտ գործողություն: Բարոյալքման մեկ այլ մեթոդ է հայրենասիրական ոգու նվազեցումը ի հակադրություն սեփական հայրենասիրական ոգու բարձրացման: Հաջորդ կարևոր քայլը ժողովրդի վստահության բարձրացումն է իր ղեկավարության հանդեպ: Ինչպես նաև կարևոր է հակառակորդի ղեկավարության վարկաբեկումը տվյալ այդ ժողովրդի առջև: Հակառակորդին բարոյալքելուն ուղղված կարևոր գործոն է համոզելը, որ արյունը հեղվում է անիմաստ, որ նրանց (հակառակորդի) գործերը վատ են ընթանում և մոտալուտ պարտությունն անխուսափելի է, հնարավորության դեպքում օգտագործել այն վարկածը, որ ղեկավարությունը ճշմարտությունը թաքցնում է (Ласцуэлл, 2021):

Պատերազմների ընթացքում թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական կողմերն էլ փորձել են ներկայացնել, որ հակառակորդը «ծանր կորուստներ» է կրում, որպեսզի թուլացնեն նրա մարտական ոգին (2020թ. պատերազմի ընթացքում հայկական ու ադրբեջանական պաշտոնական աղբյուրները ներկայացնում էին հակառակորդի կորուստների անհամեմատելի մեծ թվեր, որոնք զգալիորեն տարբեր էին իրականությունից): Օգտագործվել են կեղծ լուրեր, օրինակ՝ հրամանատարների մահվան, զորքերի խուճապի կամ պետական դավաճանության մասին (օրինակ՝ 2016թ. Ապրիլյան պատերազմի ժամանակ սոցիալական ցանցերում տարածվեց կեղծ տեղեկություն, թե հայկական կողմը մեծ կորուստներ ունի և չի կարողանում պահել դիրքերը): Պատերազմի ընթացքում փորձ է

արվել հակառակորդի առաջնորդներին ներկայացնել որպես թույլ, անպատրաստ, դավաճան կամ անտարբեր իրենց ժողովրդի ճակատագրի նկատմամբ (2020թ. պատերազմի ընթացքում և հետո հայկական մեդիան Ալիևին հաճախ ներկայացնում էր որպես Էրդողանի խամաճիկ, իսկ ադրբեջանական քարոզչությունը՝ Նիկոլ Փաշինյանին որպես «կապիտուլյանտ»)։ Ինչպես նաև 2020թ. պատերազմի ընթացքում ադրբեջանական կողմը փորձում էր ներկայացնել, որ հայկական զորքերը զանգվածաբար փախչում են, իսկ հայկական կողմը՝ որ Ադրբեջանը չունի բավարար ռեսուրսներ շարունակելու պատերազմը։

Ադրբեջանական կողմը նաև իրականացնում էր գոհված զինվորների լուսանկարների տարածում՝ հակառակորդի զորքերի ու նրանց ընտանիքների բարոյալքման համար։ Ադրբեջանական կողմից նաև տարածվեցին տեսանյութեր, որտեղ երևում էին գերեվարված հայ զինվորների նկատմամբ խոշտանգումներ ու սպանություններ, ինչը մեծ հոգեբանական ճնշում էր ստեղծում հայկական կողմի վրա։

Հակառակորդի ղեկավարության հանդեպ անվստահության հրահրում

Ինչպես արդեն նշվել է, կարևոր քայլ է հակառակորդ ղեկավարության հանդեպ տվյալ երկրի ժողովրդի անվստահության հրահրումը։ Սրա մեկ այլ, առավել ծայրահեղ դրսևորում էր ատելության հրահրումը, որը կարող է հանգեցնել հեղափոխության։ Այդ ամենի համար դրվում են մեծ ջանքեր և ռեսուրսներ։

Հակադաշնակցային և հակակառավարական քարոզչությունից բացի, որի մասին արդեն խոսվել է, կարևոր է նաև այսպես կոչված հակապետական քարոզչությունը, որն ուղղված է հակառակորդի տարածքային ամբողջականության խաթարմանը՝ հակառակորդի տարածքում գտնվող և ինքնիշխանության ձգտող տարրերին հրահրելու միջոցով։

Հայ-ադրբեջանական հակամարտության ողջ ընթացքում, իսկ պատերազմների ժամանակ առավել ևս երկուստեք իրականացվել են հետևյալ քարոզչական գործողությունները այս համատեքստում՝

- Պետական և ոչ պետական լրատվամիջոցներով փորձ է արվել սերմանել անվստահություն սեփական ղեկավարության նկատմամբ՝ ներկայացնելով այն որպես անկարող, ապաշնորհ կամ դավաճան։
- Երկուստեք տարածվում էին լուրեր, որոնք պնդում էին, որ կառավարությունը սխալ որոշումներ է կայացնում, թաքցնում է ռազմական կորուստները կամ համագործակցում է թշնամու հետ։
- Ադրբեջանում ապրող լեզգիների, թալիշների, ավարների և այլ փոքրամասնությունների շրջանում տարածվել են այնպիսի տեղեկություններ, որոնք շեշտում են նրանց անիրավ վիճակը Ադրբեջանի պետության կողմից։

- Ռազմական անհաջողությունների հետևանքով իշխանության դեմ դժգոհությունների խթանում:
- Ընդդիմադիր խմբերի ակտիվացում՝ պատերազմի ընթացքում և դրանից հետո փորձեր են արվել օգտագործել ներքին բևեռացումները, բողոքի շարժումները և անհաջողությունների նկատմամբ դժգոհությունները՝ քաղաքական ճգնաժամ ստեղծելու նպատակով:
- Հակառակորդի տարածքում խուճապի տարածում՝ պատերազմի ժամանակ և դրանից հետո պարբերաբար իրականացվել են դիվերսիոն գործողություններ կամ դրանց մասին կեղծ տեղեկություններ են տարածվել, ինչը պետք է ազդեր հանրային տրամադրությունների վրա:

Քարոզչություն իրականացնելիս հաջողության հասնելը կախված է ինչպես ընտրված քարոզչամիջոցից, այնպես էլ այն կառույցներից, որոնք ընդգրկված են կամ այս կամ այն չափով պետք է օժանդակեն քարոզչությանը, լինի դա արտաքին գործերի նախարարությունը, դիվանագիտական ներկայացուցչությունները, ռազմական գերատեսչությունը, գլխավոր շտաբը կամ այլ կառույցներ: Քանի որ պատերազմական շրջանում քարոզչությունը չի կարող կենտրոնացած լինել մեկ կառույցի ձեռքում, ուստի խիստ անհրաժեշտ է տարբեր կառույցների համակարգված աշխատանքը:

Լաստուելը նաև նշում է, որ պատերազմը չի սահմանափակվում այն աշխարհագրական տարածքով, որտեղ տեղի են ունենում ռազմական գործողությունները, ուստի կարևորում է հեռահաղորդակցության միջոցների, մեդիայի վերահսկումը պետության կողմից:

Պատերազմի ժամանակ հասարակությանը անհրաժեշտ է աստիճանաբար պատասխարել վատ լուրերին՝ նախ բարձրաձայնելով մտահոգող խնդրի մասին, ապա փոքր քանակով փաստեր հանրայնացնելով, դե իսկ ամենավերջում միայն հայտնելով վատագույն լուրը: Այս դեպքում խուճապը որոշ չափով կկանխվի, քանի որ ապագայի արժեզրկման գործընթացներն արդեն իսկ առաջացնում են արձագանքի որոշակի կայունություն հասարակական գիտակցության մեջ:

Վատ լուրերն ու անցանկալի քննադատությունները կարող են չեզոքացվել հասարակության ուշադրությունը ինչ որ բանով շեղելու արդյունքում: Դա կարող է տեղի ունենալ որևէ սենսացիոն նորության հարապարակմամբ, որը կապ չունի այն դեպքի հետ, որի վրա անցանկալի կերպով կենտրոնացած է հանրության ուշադրությունը:

Աշխատությունում նաև շոշոփվում է քարոզչական նյութերի ճշմարիտ, ճշմարտանման և կեղծ լինելու նշանակության մասին: Այս համատեքստում նշվում է, որ պետք է խուսափել այնպիսի նյութեր հրապարակելուց, որոնց ոչ ճիշտ լինելը հեշտությամբ կբացահայտվի, ինչպես նաև պետք է խուսափել հակասական նյութերի տարածումից:

Ինչպես նաև հեղինակը անդրադառնում է այն միջոցների կարևորությանը, որոնց օգնությամբ պետք է տարածվի ցանկալի տեղեկատվությունը կամ ներշնչանքը՝ գրավոր, բանավոր, երաժշտության միջոցով և այլն: Մեր օրերում, բնականաբար, շատացել են այդ միջոցներն ու ներգործման ուղիները, սկսած հեռուստատեսությունից վերջացրած սոցիալական ցանցերով, սակայն հասարակության յուրաքանչյուր խմբի համար պետք է ընտրվի ներգործման առավել հարմար տարբերակը: Եթե քարոզչությունը իրականացվում է արտաքին լսարանի համար, ապա շատ կարևոր է լեզվի ընտրությունը: Բնականաբար բազմալեզու քարոզչությունը, որը հասու կլինի ավելի շատ ազգերի ներկայացուցիչների, առավել արդյունավետ կգործի: Դե իսկ հակառակորդի բարոյալքման նպատակով հակառակորդ երկրի ներսում այդ լեզվով քարոզչություն իրականացնելու կարևորության մասին արդեն խոսվել է:

Հեղինակը ամփոփելով նշում է, որ «վերջին պատերազմի պատմությունը ցույց է տալիս, որ ժամանակակից պատերազմը պետք է ծավալվի երեք ճակատով՝ ռազմական, տնտեսական և քարոզչական: Տնտեսական շրջափակումը խեղդում է քարոզչությունը շփոթեցնում է, իսկ ռազմական ուժը տալիս է վճռական հարվածը» (Лассуэлл, 2021):

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հոդվածը՝ կարող ենք ևս մեկ անգամ ընդգծել պատերազմական շրջանում քարոզչության անփոխարինելի դերը: Ինչպես հնում, այնպես էլ մեր օրերում պետությունները դիմել են քարոզչության՝ թե՛ մինչպատերազմական, թե՛ պատերազմական, թե՛ հետպատերազմական շրջանում: Թեև բազմաթիվ հեղինակներ են անդրադարձել քարոզչության թեմային, սակայն Հ. Լասսուելը տվել է առավել համապարփակ դասակարգում ու նկարագրություն՝ պատերազմի շրջանում կիրառվող քարոզչական մեխանիզմների: Այսպիսով, ըստ հեղինակի, քարոզչությունը պետք է ուղղված լինի հետևյալ հիմնական թիրախային գործողություններին՝

տեղության մոբիլիզացիա,
պատերազմի արդարացում,
ակառակորդի դեմոնիզացիա,
ակառակորդի լիդերների դեմոնիզացիա,
արտական ոգու պահպանում,
ինատեսակների պայքարի լուսաբանում,
աշնակիցների հետ հարաբերությունների կառուցում,
ակառակորդի բարոյալքում,
ակառակորդի ղեկավարության հանդեպ անվստահության սերմանում:

Իհարկե այս ցանկը հեղինակի առաջարկած ամբողջական ցանկը չէ, այլ այն հիմնական մասը, որը կիրառելի է նաև հայ-ադրբեջանական տեղեկատվական պայքարի համատեքստում:

Կարող ենք ընդգծել, որ այս համատեքստում Ադրբեջանական կողմը կատարում է հետևյալ գործողությունները՝

այատյացության սերմանում պետական մակարդակով,
ատերազմի արդարացում հայերին որպես զավթողներ ներկայացնելու ֆոնի վրա,
այաստանի քաղաքական դեկավարության վարկաբեկում,
եփական ռազմական առավելության ընդգծում,
իջազգային հանրության առաջ սեփական գործողությունների արդարացում՝ հաճախ ոչ ազնիվ միջոցներով,
արածաշրջանից հայական հետքի ոչնչացում՝ հայկական մշակութային կոթողների վերացման ուղեկցությամբ և պատմության վերաշարադրմամբ:

Այս առումով հայկական կողմի գործողությունները առավելապես արձագանքողական են՝

դրբեջանական ապատեղեկատվության և կեղծարարության վերհանում,
դրբեջանին որպես ավտորիտար և ագրեսոր պետության ներկայացում,
բցախը որպես պատմական հայկական տարածք և Արցախյան հարցը որպես մարդու իրավունքների հարց ներկայացները, արցախցի ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունքի միջազգային իրավունքի նորմերին համապատասխանության բարձրաձայնում,
դրբեջանի՝ պատերազմի ընթացքում կատարած ռազմական հանցագործությունների բարձրաձայնում,
այկական մշակութային ժառանգության (եկեղեցիներ, խաչքարեր, մշակութային հուշարձաններ) ոչնչացման վերաբերյալ փաստերի վերհանում,
դրբեջանի դեկավարության կողմից պայմանավորվածությունների և ագրեսիվ հռետորաբանության քննադատություն:

Սակայն հայկական կողմից այս ամենն համակարգված բնույթ չի կրում և ավելի շատ ուշադրության կարիք ունի: Այս առումով կարևորվում է պրոակտիվ գործողությունների իրականացումը, մասնավորապես՝

- Մշակված և համակարգված տեղեկատվական ռազմավարության ստեղծում,
- Օտարալեզու գրականության և հայամետ նյութերի տարածում,
- Դիվանագիտական ներկայացուցչությունների դերի ուժեղացում միջազգային հարթակներում Հայաստանի իմիջի բարելավման գործում,

- Ադրբեջանական թեզերի հակադարձման ուղղությամբ աշխատանքների ինտենսիվացում,
- Դաշնակիցների հետ ամուր քաղաքական և տնտեսական կապերի ստեղծման ուղղությամբ ջանքերի ակտիվացում, նոր հնարավոր դաշնակիցների շահագրգռում,
- Ադրբեջանի ներքին լսարանի, հատկապես էթնիկ փոքրամասնությունների ուղղությամբ աշխատանք:

Ինչպես նշվել է, պատերազմական շրջանում տարվող աշխատանքից կարևոր է նաև մինևպատերազմական և հետպատերազմական շրջանում տարվող աշխատանքը: Ճիշտ տարվող տեղեկատվական քաղաքականությունը, հատկապես հակառակորդի քարոզչական և սադրիչ տեղեկատվության հերքումը կարող է խաթարել հակառակորդի ձեռնարկները, ընդհուպ մինչև ռազմական ագրեսիայի կանխում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հարությունյան Գ., Քոթանջյան Հ. (2009). *Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը*. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան.

Гарольд Д. Лассуэлл (2021). *Техника пропаганды в Мировой войне* (Перевод с английского В. Г. Николаева), Москва.

Jowett G. S., O'Donell V. (2006). *Propaganda and persuasion*. London.
https://www.google.am/books/edition/Propaganda_and_Persuasion/vIC92PdJ0l0C?hl=hy&gbpv=1&dq=persuasion&printsec=frontcover

Armenia warns of escalation risk after Azeri leader calls it “fascist.” (2025, January 8). Reuters.com. Retrieved March 18, 2025, from <https://www.reuters.com/world/asia-pacific/armenia-warns-escalation-risk-after-azeri-leader-calls-it-fascist-2025-01-08/>

12-year old child killed by Azerbaijani artillery fire against civilian settlements: 2 wounded. (2016). Armenpress. <https://armenpress.am/en/article/841788>

Butler, B. E. (2020, December 10). *The Syrian mercenaries used as “cannon fodder” in Nagorno-Karabakh*. <https://www.bbc.com/news/stories-55238803>

France, & France. (2020). Nagorno-Karabakh: Armenia accuses Azerbaijan of using phosphorus bombs. *France 24*. <https://www.france24.com/en/europe/20201119-nagorno-karabakh-ceasefire-armenia-accuses-azerbaijan-of-using-phosphorus-bombs>

Jazeera, A. (2012). The axe murderer who became a Facebook hero. *Al Jazeera*. <https://www.aljazeera.com/opinions/2012/9/5/the-axe-murderer-who-became-a-facebook-hero>

- Smith, & Lannes, B.** (2025). *Propaganda | Definition, History, Techniques, Examples, & Facts*. Encyclopedia Britannica. <https://www.britannica.com/topic/propaganda>
- Soylu, R.** (2020, October 12). Turkish armed drones used against Armenia, Azerbaijan confirms. *Middle East Eye*. <https://www.middleeasteye.net/news/armenia-azerbaijan-conflict-turkey-drones>

REFERENCE LIST

- Arutyunyan G., Kotandzhyan G.** (2009). *Antiarmyanskaya informacionnaya sistema Azerbajdzhana (Anti-Armenian information system of Azerbaijan)*. Nauchno-obrazovatel'nyj fond «Noravank», Erevan. <https://www.noravank.am/upload/pdf/book.pdf>
- Jowett G. S., O'Donnell V.** (2006). *Propaganda and persuasion*. London. https://www.google.am/books/edition/Propaganda_and_Persuasion/vIC92PdJ0l0C?hl=hy&gbpv=1&dq=persuasion&printsec=frontcover
- Armenia warns of escalation risk after Azeri leader calls it “fascist.”** (2025,). Reuters.com. Retrieved March 18, 2025, from <https://www.reuters.com/world/asia-pacific/armenia-warns-escalation-risk-after-azeri-leader-calls-it-fascist-2025-01-08/>
- 12-year old child killed by Azerbaijani artillery fire against civilian settlements: 2 wounded.** (2016). Armenpress. <https://armenpress.am/en/article/841788>
- Butler, B. E.** (2020). The Syrian mercenaries used as “cannon fodder” in Nagorno-Karabakh. <https://www.bbc.com/news/stories-55238803>
- France, & France.** (2020). Nagorno-Karabakh: Armenia accuses Azerbaijan of using phosphorus bombs. France 24. <https://www.france24.com/en/europe/20201119-nagorno-karabakh-ceasefire-armenia-accuses-azerbaijan-of-using-phosphorus-bombs>
- Jazeera, A.** (2012). The axe murderer who became a Facebook hero. Al Jazeera. <https://www.aljazeera.com/opinions/2012/9/5/the-axe-murderer-who-became-a-facebook-hero>
- Smith, & Lannes, B.** (2025). *Propaganda | Definition, History, Techniques, Examples, & Facts*. Encyclopedia Britannica. <https://www.britannica.com/topic/propaganda>
- Soylu, R.** (2020). Turkish armed drones used against Armenia, Azerbaijan confirms. *Middle East Eye*. <https://www.middleeasteye.net/news/armenia-azerbaijan-conflict-turkey-drones>

e

s

i

n

t

РЕЗЮМЕ
ПРОПАГАНДА ВО ВРЕМЯ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ. АНАЛИЗ МОДЕЛИ
ЛАССЮЭЛЯ НА ПРИМЕРЕ АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКОЙ
ИНФОРМАЦИОННОЙ БОРЬБЫ

АННА СИСОЯН

Пропаганда является важнейшей составляющей информационных войн. На протяжении столетий пропаганда использовалась для укрепления собственных позиций, объединения широкого круга вокруг определенной цели, дискредитации противника, максимально беспрепятственного продвижения собственных целей и в других целях. Фактор пропаганды особенно важен в период, предшествующий военным действиям, и во время самих войн. Масштабная пропагандистская работа проводилась во время Первой и Второй мировых войн и в период, предшествовавший им. Американская пропагандистская машина проделала колоссальную работу во время Корейской и Вьетнамской войн. В наши дни проявления пропагандистского противостояния наблюдались в 2008 году во время грузино-российской войны, Крымского кризиса 2014 года, армяно-азербайджанской апрельской четырехдневной войны 2016 года, 44-дневной войны 2020 года, а в настоящее время пропаганда вовсю используется параллельно с российско-украинской войной. Поэтому изучение механизмов пропаганды в военное время имеет практическое значение.

Цель статьи — проанализировать особенности пропаганды военного времени на основе подходов, выдвинутых одним из крупнейших теоретиков в этой области Г. Лассуэлом, с примерами аналогичных проявлений в армяно-азербайджанских войнах. В статье приводятся наиболее распространенные определения и характеристики пропаганды, а затем ссылаются на подходы, содержащиеся в книге Лассуэлла «Механизмы пропаганды мировой войны». Примечательно, что хотя произведение было написано в первой половине XX века, описанные в нем механизмы военной пропаганды актуальны и применимы по сей день.

Ключевые слова: пропаганда, война, убеждение, Лассуэль, Армения, Азербайджан, информационная борьба.

ABSTRACT
PROPAGANDA IN WAR TIMES: ANALYSIS OF LASSUELLE'S MODEL ON THE
EXAMPLE OF THE ARMENIAN-AZERBAN INFORMATION STRUGGLE
ANNA SISOYAN

Propaganda is the most important component of information wars. For centuries, propaganda has been used to strengthen one's own positions, unite a wide circle around a certain goal, discredit the enemy, advance one's own goals as unhindered as possible, and for other purposes. The propaganda factor is especially important in the period preceding military operations and during wars themselves. Large-scale propaganda work was carried out during the First and Second World Wars and the period preceding them. The American propaganda machine did a tremendous job during the Korean and Vietnam Wars. In our days, there were manifestations of propaganda confrontation in 2008 during the Georgian-Russian war, the 2014 Crimean crisis, the 2016 Armenian-Azerbaijani April Four-Day War, the 2020 44-Day War, and currently propaganda is being used in full force in parallel with the Russian-Ukrainian war. Therefore, the study of propaganda mechanisms during wartime has practical significance.

The aim of the article is to analyse the peculiarities of wartime propaganda based on the approaches put forward by one of the major theorists in the field, H. Lasswell, with examples of similar manifestations in the Armenian-Azerbaijani wars. The article provides the most common definitions and characteristics of propaganda, and then refers to the approaches contained in Lasswell's book "Propaganda Mechanisms of the World War". It is noteworthy that although the work was written in the first half of the 20th century, the wartime propaganda mechanisms described in the work are relevant and applicable to this day.

Key words: *propaganda, war, persuasion, Lasswell, Armenia, Azerbaijan, information struggle.*

Հոդվածը ստացվել է 04.02.2025

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 15.02.2025

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 25.03.2025

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԴԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան,

Էլ. huugli' tigran-ghazaryan@inbox.ru

DOI: 10.24234/scientific.v1i48.195

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը դիտարկում է ոստիկանության առանցքային դերը սահմանադրական կարգի պահպանման գործընթացում՝ հատկապես քաղաքացիական անհնազանդության պայմաններում: Բոլոր ժամանակներում ու մշակույթներում, երբ հասարակության բողոքներն ու սոցիալական շարժումները դառնում են քաղաքական բախումների տեսանելի արտահայտություն, պետության իրավապահ մարմինները հայտնվում են բարոյական և իրավաբանական բարդ ընտրության առջև՝ պահպանելու հասարակական կարգը, միաժամանակ չխախտելով քաղաքացիական ազատությունները: Հեղինակավոր իրավաբանական ու քաղաքագիտական գործիչները նշում են, որ ոստիկանության գործողությունները, ինչպես ցանկացած ինստիտուցիոնալ միջամտություն, պետք է հարգեն օրենքի գերակայությունը և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները՝ հատկապես այն ժամանակ, երբ հանրային բողոքի ալիքները ճնշելու փորձերը կարող են հակասել սահմանադրականության էությանը:

Հոդվածի նպատակն է վերլուծել ոստիկանության ինստիտուցիոնալ դերը՝ որպես սահմանադրական կարգի պահպանման երաշխիք քաղաքացիական անհնազանդության պայմաններում՝ Հայաստանի քաղաքական և իրավական համատեքստում: Վերլուծությունը կատարվել է համադրելով տեղական փորձը միջազգային օրինակների հետ՝ բացահայտելով այն մեխանիզմները, որոնք թույլ են տալիս միաժամանակ ապահովել քաղաքացիների ազատությունները և պետության կայունությունը: Հոդվածում քննվում է, թե ինչպես է ոստիկանությունը հանդես գալիս որպես սահմանադրական կարգի պաշտպան՝ միաժամանակ պահպանելով հանրային կարգը և չխախտելով մարդու հիմնարար իրավունքները: Հոդվածի հիմնական եզրահանգումն այն է, որ ոստիկանության ինստիտուցիոնալ վերակազմավորումը և հաշվետվողականության մեխանիզմների

ամրապնդումը հնարավորություն են ստեղծում համադրել սահմանադրական կարգի պաշտպանությունն ու քաղաքացիական ազատությունների պահպանումը:

***Բանալի բառեր՝** սահմանադրական կարգ, ինստիտուցիոնալ երաշխիք, քաղաքական կայունություն, մարդու իրավունքներ, պետական ինստիտուտներ, ժողովրդավարություն, հաշվետվողականություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից ժողովրդավարական պետություններում սահմանադրական կարգի կայունությունը հանդիսանում է ոչ միայն պետականության պահպանման նախապայման, այլև քաղաքացիական հասարակության զարգացման հիմք: Այս համատեքստում ոստիկանության դերը որպես սահմանադրական կարգի պահպանության ինստիտուցիոնալ երաշխիք առանձնահատուկ կարևորություն է ստանում հատկապես քաղաքացիական անհնազանդության իրավիճակներում, երբ խախտվում է հասարակական կարգի ու իրավական պետության նուրբ հավասարակշռությունը: Քաղաքացիական անհնազանդությունը որպես քաղաքացիական ակտիվության ձև՝ մի կողմից արտահայտում է քաղաքացիների իրավունքը՝ արտահայտելու իրենց դժգոհությունը իշխանությունների վարքագծի նկատմամբ, իսկ մյուս կողմից՝ կարող է սպառնալիք հանդիսանալ սահմանադրական ինստիտուտների գործունեության շարունակականության համար: Այս երկակի բնույթը պահանջում է հավասարակշռված և իրավաչափ արձագանք պետական մարմինների կողմից, որտեղ առանցքային դերակատարություն ունի ոստիկանությունը:

Հայաստանում 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից և դրան հաջորդած քաղաքական փոփոխություններից հետո քաղաքացիական անհնազանդության դրսևորումներն ավելի հաճախակի են դարձել՝ ընդհուպ համակարգային ճգնաժամի բնույթ ստանալով: Այդ դրսևորումներում ոստիկանության վարքագիծը հաճախ հայտնվում է քննադատության կենտրոնում՝ մի կողմից իրավունքի գերակայության ապահովման, մյուս կողմից բողոքող քաղաքացիների հիմնարար ազատությունների սահմանափակման տեսանկյունից: Այս իրավիճակը առաջացնում է կարևոր տեսական և պրակտիկ հարցադրումներ. ի՞նչ սահմաններում է ոստիկանությունն իրավասու միջամտել անհնազանդության գործողություններին, ինչպե՞ս կարող է պահպանել սահմանադրական կարգը՝ միաժամանակ չվնասելով ժողովրդավարության հիմքերը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս հոդվածում կիրառվել են համակցված հետազոտական մեթոդներ, որոնք ապահովել են ոստիկանության դերի և սահմանադրական կարգի պահպանման գործընթացի բազմակողմանի վերլուծություն:

Ներկա հետազոտության նպատակների և խնդիրների կատարումն իրականացվել է հետևյալ մեթոդների միջոցով՝

- **վերլուծական մեթոդ**՝ իրավական և քաղաքական փաստաթղթերի, օրենքների և վարչական կանոնակարգերի ուսումնասիրության համար,
- **համեմատական մեթոդ**՝ տարբեր երկրների ոստիկանության փորձերի համադրության և համեմատության նպատակով,
- **հետևողականության մեթոդ**՝ ոստիկանության գործունեության և հասարակական արձագանքների շղթայական կապերի ուսումնասիրության համար:

Այս մեթոդների համադրմամբ հետազոտությունն ապահովում է թեմայի համապարփակ և նուրբ վերլուծություն՝ հնարավորություն ընձեռելով ընդգծել ոստիկանության դերը սահմանադրական կարգի պահպանության և քաղաքական կայունության ամրապնդման գործում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Սահմանադրական կարգը պետության իրավաքաղաքական կառուցվածքի հիմքն է՝ ներառելով ժողովրդավարության սկզբունքները, պետական իշխանության ճյուղավորման համակարգը, քաղաքացիական իրավունքների ու ազատությունների երաշխիքները: Սահմանադրական կարգի պաշտպանությունը պահանջում է ոչ միայն նորմատիվ հիմքեր, այլև ինստիտուցիոնալ մեխանիզմների գործարկում: Ոստիկանությունը, որպես իրավապահ համակարգի առանցքային օղակ, իրավական մանդատ ունի հասարակական կարգի պահպանման և սահմանադրական կարգին սպառնացող վտանգների չեզոքացման համար:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է՝ պետական մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են գործել Սահմանադրությանը համապատասխան (ՀՀ Սահմանադրություն, 2015), իսկ ոստիկանությունը գործում է այս սկզբունքի տրամաբանությամբ՝ հավասարակշռելով պետական ինքնիշխանության պաշտպանությունը և անհատական ազատությունների իրականացումը: Ոստիկանությունը ստիպված է գործել այնպիսի պայմաններում, երբ հսկայական թվով քաղաքացիներ իրենց դժգոհությունը արտահայտում են սահմանադրական իրավունքի շրջանակներում:

Ինչպես նշել է Մաքս Վեբերը, պետությունն է միակ օրինական ուժի մենաշնորհ ունեցողը՝ սահմանների ներսում: Սակայն այս ուժի կիրառման լեգիտիմությունը պայմանավորված է ոչ թե նրա հնարավորությամբ, այլ դրա իրավաչափությամբ՝ իրավունքի գերակայության պայմաններում: Արդյունքում ոստիկանության ցանկացած գործողություն պետք է դիտարկվի ոչ միայն իրավական, այլև քաղաքական և հանրային ընկալման հարթությունում:

«Քաղաքացիական անհնազանդություն» (civil disobedience) տերմինը որպես քաղաքական գաղափարական ուղղություն լայնորեն շրջանառության մեջ է դրվել ամերիկացի գրող և մտածող Հենրի Դեյվիդ Թորոյի կողմից 1849 թվականին հրատարակված իր նշանավոր էսսեում՝ “Resistance to Civil Government”, որը հետագայում առավել հայտնի դարձավ որպես քաղաքացիական անհնազանդություն (Civil Disobedience):

Թորոն, արձագանքելով իր ժամանակի քաղաքական անարդարություններին՝ մասնավորապես՝ Ամերիկայի կողմից Մեքսիկայի դեմ պատերազմին և ստրկատիրական համակարգին, հանդես եկավ տեսությամբ, ըստ որի «մարդն առավել բարձր պետք է հաշվետու լինի բարոյական արդարությանը, քան՝ կառավարությանը»:

Թորոյի ազդեցությունը զգալի է եղել ոչ միայն ԱՄՆ-ում, այլև համաշխարհային ազատագրական շարժումների մեջ: Մասնավորապես՝ Մահաթմա Գանդին Թորոյի աշխատանքը համարում էր իր ոչ բռնի պայքարի փիլիսոփայության հիմքերից մեկը: Գանդին քաղաքացիական անհնազանդությունը վերածեց ոչ թե պարզապես քաղաքական մարտավարության, այլ՝ կյանքի ամբողջական փիլիսոփայության: Նրա կողմից ձևակերպված **սատյագրահա** (հնդ.՝ սատյա՝ «ճշմարտություն» + ագրահա՝ «կաշեղ») գաղափարը ենթադրում էր ճշմարտության, բարոյականության և ոչ բռնության վրա հիմնված պայքար, որտեղ անհնազանդությունը ոչ թե դրսևորում է ատելություն ընդդեմ իշխանության, այլ՝ բողոք արդարության համար՝ սիրո և համբերության միջոցով (King M. L. Jr., 1963):

Գանդին քաղաքացիական անհնազանդությունը կիրառեց բրիտանական գաղութատիրական համակարգի դեմ՝ ընդգծելով, որ ճշմարիտ ուժը (սատյագրախիկ ուժը) մետաֆիզիկական և բարոյական է, ոչ թե ֆիզիկական: Նրա գործունեությունը մասնավորապես ընդգրկում էր.

- **Salt March (Աղի երթ), 1930թ.** – խաղաղ, հրապարակային և զանգվածային արշավ բրիտանական աղի մոնոպոլիայի դեմ (Dalton, 1993):
- **Ոչ բռնության գաղափարի ամրապնդում**՝ որպես ազգային ինքնության ու պայքարի հիմնական գործիք:

Գանդիի մոդելը վերածվեց մի համաշխարհային նախադեպի, որը կիրառվեց ոչ միայն Հնդկաստանի անկախության, այլև տարբեր ազատագրական շարժումների համատեքստում՝ ինչպես Աֆրիկայում, այնպես էլ ԱՄՆ-ում:

ԱՄՆ-ում քաղաքացիական անհնազանդության ամենանշանավոր և բարոյապես արդարացված շարժումների առաջնորդն էր **Մարտին Լյութեր Քինգ կրտսերը**, ով 1950-60-ական թվականներին առաջնորդեց ամերիկյան սևամորթ քաղաքացիների իրավունքների շարժումը: Քինգը տեսականորեն և բարոյապես զարգացրեց Թորոյի և

Գանդիի հիմնադրույթները՝ դրանք ներմուծելով ամերիկյան սահմանադրական մշակույթի մեջ:

Նրա գլխավոր ներդրումներն են՝

- **«Բիրմինգհեմյան բանտից նամակ» (1963)** – քաղաքացիական անհնազանդության փիլիսոփայության տեսական մանիֆեստ, որտեղ Քինգը հիմնավորում է՝ «անարդար օրենքին չհնազանդվելը ոչ թե անօրինականություն է, այլ՝ բարոյական պարտավորություն» (*Letter from Birmingham Jail*, 1963)
- **Հավասարության և իրավունքի սահմանադրական շեշտադրում** – Քինգը փորձեց ամերիկյան սահմանադրական արժեքները գործնականորեն կիրառել՝ ուղղված ռասայական խտրականության դեմ:
- **Բռնության չդիմելու տրամաբանություն** – Քինգը պնդում էր, որ բարոյական հաղթանակը իրական է միայն այն ժամանակ, երբ պայքարը մնում է խաղաղ և ազնիվ:

Քինգի առաջնորդությամբ քաղաքացիական անհնազանդությունն ապացուցեց, որ հնարավոր է անգամ առավել հակասական և ռեպրեսիվ պայմաններում հասնել համակարգային փոփոխության՝ առանց բռնության, բացառապես հանրային ճնշման և բարոյական դիրքորոշման միջոցով:

Քաղաքացիական անհնազանդությունը ժամանակակից ժողովրդավարության ներսում վերածվել է սոցիալ-քաղաքական պատասխանատվության և հանրային դիմադրության կարևոր գործիքի՝ առանց սահմանադրական շղթաները կոտրելու:

Քաղաքացիական անհնազանդությունը կրում է ոչ միայն քաղաքական, այլև իրավաքաղաքական բնույթ: Այն արտահայտում է սոցիալական խմբերի կամ ամբողջ հասարակության՝ որոշ քաղաքական գործընթացների կամ ինստիտուցիոնալ կառույցների հանդեպ հակազդեցությունը: Դրա նպատակն է ստեղծել հանրային ճնշում՝ իշխանությունների որոշումները վերանայելու կամ բարեփոխելու համար:

Քաղաքացիական անհնազանդությունը, սակայն, ունի երկակի բնույթ.

- Մի կողմից այն դրսևորման ձև է՝ սահմանադրորեն երաշխավորված հավաքների, խոսքի, իրազեկման ազատությունների:
- Մյուս կողմից՝ եթե այն ուղղվում է պետական ինստիտուտների լեգիտիմությունը խաթարելուն, պետական իշխանության բռնազավթմանը կամ սահմանադրական կարգի վերափոխմանը՝ առանց սահմանադրական ընթացակարգերի, այն վերածվում է իրավական սպառնալիքի:

Այս համատեքստում է, որ իրավական տեսանկյունից պետք է հստակ սահմանագծել օրինական և ոչ օրինական անհնազանդության ձևերը: Միջազգային իրավունքը՝ մասնավորապես ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների կոմիտեի №37

մեկնաբանությունը, հատակ նշում է, որ խաղաղ հավաքները կարող են պարունակել օրենքի խախտումներ, սակայն դեռևս մնալ խաղաղ, եթե դրանց նպատակն ու մեթոդները ուղղված չեն բռնությանը: Հետևաբար ոստիկանության միջամտությունը պետք է հիմնված լինի այդ դեյքիկատ սահմանների ըմբռնման վրա՝ քաղաքական չեզոքությամբ և համաչափության սկզբունքով (*General Comment No. 37*):

Հայաստանի քաղաքացիական անհնազանդության բազմաթիվ դրվագներ բացահայտել են ոչ միայն սահմանադրական կարգի պահպանման վերաբերյալ իրավական մարտահրավերները, այլև իրավապահ մարմինների ինստիտուցիոնալ թերությունները: Ստորև ներկայացված դեպքերը մասնավոր օրինակներ են, որոնք բացահայտում են համակարգային խոցելիությունները:

1. 2008թ. մարտի 1-ի իրադարձությունները.

Նախագահական ընտրություններից հետո ծագած բողոքի գործողությունների նկատմամբ ոստիկանության արձագանքը՝ մահվան դեպքերով, անհամաչափ ուժի կիրառումով և արտակարգ դրության հաստատմամբ, ցույց տվեց ոչ միայն իրավական վերահսկողության բացակայությունը, այլև քաղաքական միջամտությամբ պայմանավորված գործելակերպը: Արդյունքում հասարակության մեջ խորացավ անվստահությունը պետական ինստիտուտների, հատկապես՝ ոստիկանության հանդեպ:

2. 2015թ. «Էլեկտրիկ Երևան» շարժումը.

Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած զանգվածային նստացույցները՝ ի պատասխան Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման, ստացան աննախադեպ հանրային արձագանք: Ոստիկանությունը, չնայած որոշ դեպքերում ցուցաբերած զսպվածությանը, միաժամանակ արձանագրեց լրագրողների նկատմամբ բռնություններ և հավաքների ուժային ցրումներ: Այս դրվագը ևս փաստեց, որ ուժային մարմինները չունեն կայուն մեխանիզմներ՝ իրավունքի գերակայության պահպանման համատեքստում գործելու համար:

3. 2016թ. «Սասնա Ծռեր» զինված խմբի գրավման օրերին ստեղծված շարժումները.

Ոստիկանության գնդի գրավման հետ կապված ճգնաժամը ուղեկցվեց զանգվածային բողոքներով: Յույցերի ցրման ժամանակ ոստիկանությունը կրկին դիմեց անհամաչափ ուժի կիրառման, իսկ մի շարք ակտիվիստների և լրագրողների նկատմամբ արձանագրվեցին բռնի գործողություններ: Այս իրավիճակը բացահայտեց ոչ միայն օպերատիվ կառավարման բացակայությունը, այլև քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված ուժի ընտրովի կիրառում:

4. 2018թ. ապրիլ-մայիս ամիսների քաղաքացիական անհնազանդությունը.

Թավշյա հեղափոխության ընթացքում զանգվածային ցույցերը ոստիկանության կողմից

հիմնականում ընթանում էին առանց ուժի գործադրման՝ պայմանավորված քաղաքական վերնախավի ներգործության նվազումով և հանրային հսկողության ուժեղացմամբ: Սա որոշ փորձագետների կողմից դիտարկվում է որպես իրավապահ համակարգի ինստիտուցիոնալ վերաիմաստավորման և մասնակի դե-պոլիտիզացիայի գործընթացի սկիզբ:

Քաղաքացիական անհնազանդության ժամանակ իրավապահ մարմինների արձագանքման մոդելները տարբեր երկրներում զգալիորեն տարբերվում են՝ պայմանավորված օրենսդրական շրջանակներով, ժողովրդավարության մակարդակով և ոստիկանության ինստիտուցիոնալ կառուցվածքով: Ստորև ներկայացված են տարբեր մոդելներ՝ ընդգծելով հիմնական առանձնահատկությունները:

1. Գերմանիա – Դիալոգային մոդել (Dialogpolizei)

Գերմանիայում ոստիկանությունը քաղաքացիական անհնազանդության պայմաններում կիրառում է հաղորդակցման վրա հիմնված մոդել, որը հայտնի է որպես «Dialogpolizei»: Այս մոդելը հիմնված է կանխարգելման, վստահության ձևավորման և ցուցարարների հետ ուղիղ երկխոսության սկզբունքների վրա: Այն նպատակ ունի նվազեցնել լարվածությունը և խուսափել ֆիզիկական ուժի կիրառումից՝ ընդգծելով խաղաղ համակեցության և մարդու իրավունքների հարգման սկզբունքները: Վառ օրինակ է 2010 թվականին Դրեզդեն քաղաքում տեղի ունեցած հակաֆաշիստական բողոքի ակցիան: Այդ ժամանակ «Dresden Without Nazis» քաղաքացիական նախաձեռնությունը կազմակերպեց զանգվածային խաղաղ արգելափակումներ՝ կանխելու նեոնացիստական խմբերի երթը: Ոստիկանությունը, առաջնորդվելով «Dialogpolizei» մոդելով, նախապես կապ հաստատեց ցույցի կազմակերպիչների հետ, համաձայնեցրեց թույլատրելի շրջանակները և մեծ մասամբ զերծ մնաց բռնի միջամտությունից: Այս մոտեցումը նպաստեց նրան, որ երթն այդպես էլ չկայանա՝ խուսափելով էսկալացիայից և բռնությունից: (France 24. (2010). Protesters stop neo-Nazi rally in Dresden)

2. Ֆրանսիա – Ուժային միջամտության մոդել

Ֆրանսիայում քաղաքացիական անհնազանդության ժամանակ ոստիկանության արձագանքը բնութագրվում է ուժային միջոցների կիրառմամբ, մասնավորապես՝ Compagnies Républicaines de Sécurité (CRS) և Gendarmerie Mobile ստորաբաժանումների միջոցով: Այս մոդելը ներառում է ջրցան մեքենաների, արցունքաբեր գազի, ռետինե փամփուշտների և այլ հատուկ միջոցների օգտագործում՝ ցույցերը ցրելու նպատակով: Կոնկրետ դեպք է «Դեղին բանկոններ» շարժումը՝ 2018 թվականի նոյեմբերին Ֆրանսիայում սկսվեց «Դեղին բանկոններ» (Gilets Jaunes) շարժումը՝ ի նշան բողոքի վառելիքի հարկերի բարձրացման դեմ, որը հետագայում վերաճեց ավելի լայն սոցիալ-տնտեսական պահանջների: Ցույցերի ընթացքում ոստիկանությունը կիրառեց ջրցան

մեքենաներ և արցունքաբեր գազ՝ ցուցարարներին ցրելու համար: Բազմաթիվ դեպքերում արձանագրվեցին ուժի անհամաչափ կիրառման դեպքեր, որոնց հետևանքով ցուցարարներ վիրավորվեցին: (*The Guardian*, 2019):

3. Նորվեգիա, Նիդեռլանդներ – Համագործակցային մոդել

Նորվեգիայում և Նիդեռլանդներում ոստիկանության արձագանքը քաղաքացիական անհնազանդության ժամանակ բնութագրվում է համագործակցային մոդելով, որը ներառում է ոստիկանության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և տեղական իշխանությունների միջև ակտիվ համագործակցություն: Այս մոդելը նպատակ ունի կանխարգելել լարվածությունը, խուսափել բռնի միջամտություններից և պահպանել հասարակական կարգը՝ հիմնվելով վստահության և երկխոսության վրա:

2020 թվականի հունիսին Նորվեգիայում տեղի ունեցան «Black Lives Matter» շարժման ցույցեր՝ ի հիշատակ Ջորջ Ֆլոյդի: Ոստիկանությունը համագործակցեց ցուցարարների կազմակերպիչների հետ՝ ապահովելու խաղաղություն և կանխելու բռնի միջամտությունները: Նորվեգիայի ոստիկանության ներկայացուցիչները հանդիպումներ անցկացրեցին ցուցարարների հետ, քննարկեցին երթերի երթուղիները և պայմանավորվեցին անվտանգության միջոցառումների մասին: Այս մոտեցումը նպաստեց ցույցերի խաղաղ անցկացմանը՝ առանց լուրջ միջադեպերի: (*Norwegian Police Directorate*, 2020):

4. Շվեդիա – Կանխարգելման մոդել

Շվեդիայի ոստիկանությունը ցուցարարների հետ հարաբերություններում հիմնականում կենտրոնանում է կանխարգելման վրա: Նրանք ակտիվորեն համագործակցում են տեղական համայնքների, սոցիալական ծառայությունների և քաղաքացիական հասարակության հետ՝ նպատակ ունենալով կանխել լարվածությունը և բռնության զարգացումը: Ոստիկանները անցնում են մարդու իրավունքների և միջմշակութային հաղորդակցության վերապատրաստումներ, իսկ տեղական հանցագործությունների կանխարգելման խորհուրդները մշակում են ռազմավարություններ՝ հանցագործությունների և անկարգությունների կանխարգելման համար (*Gustafsson*, 2011):

5. ԱՄՆ – Դեկենտրալիզացված, հաճախ բռնի մոդել

ԱՄՆ-ում ոստիկանությունը գործում է նահանգային մակարդակով, և արձագանքները զգալիորեն տարբեր են: Որոշ դեպքերում արձագանքը եղել է անհամաչափ՝ կիրառելով ռետինե փամփուշտներ, ձերբակալություններ:

6. Վրաստան – Հետխորհրդային անցումային մոդել

Վրաստանում բարեփոխումների արդյունքում ոստիկանությունը դարձել է հարաբերականորեն զսպված, սակայն հաճախակի են քաղաքական միջամտության դեպքերը: Դեռևս առկա են ինստիտուցիոնալ թուլություններ:

7. Ռուսաստան – Ճնշող մոդել

Ռուսաստանում ոստիկանությունը գործում է կենտրոնացված և ավտորիտար վերահսկողության ներքո: Ցույցերն արագորեն ցրվում են, կիրառվում են զանգվածային ձերբակալություններ և բռնի միջամտություններ՝ առանց անկախ վերահսկողության: Օրինակ՝ 2021 թվականին Ալեքսեյ Նավալնիի ձերբակալությունից հետո տեղի ունեցած բողոքի ցույցերը ցույց տվեցին իրավապահ մարմինների խիստ արձագանքը (*Human Rights Watch*, 2021);

Ոստիկանությունը պարտավոր է արձագանքել ցանկացած իրավիճակին, որը սպառնում է հանրային անվտանգությանը, պետական և հանրային գույքին կամ անձանց կյանքին և առողջությանը: Սակայն քաղաքացիական անհնազանդության դեպքում այս պարտավորությունը բխվում է իրավունքի և ազատության սահմաններից: Այս իրավիճակում ոստիկանության հիմնական խնդիրը դառնում է ոչ թե «քանդելը», այլ՝ «կառավարելը»: Այստեղ մեծ դեր ունի բանակցային գործառույթը՝ ակտիվ կապի հաստատում քաղաքացիական խմբերի, նախաձեռնությունների և կազմակերպիչների հետ: Կարծում եմ՝ Հայաստանի համար առավել ճիշտ կլինի այս գործելակերպի կիրառումը, որը հաջողությամբ կիրառվում է նաև Նորվեգիայում և Նիդեռլանդներում: Նորվեգիայի ոստիկանությունը ներդրել է դիպլոմատիկ լուծումներով ոստիկանական մոդել՝ *Dialogpolitiet*, որի հիմնական նպատակն է խաղաղ հանրահավաքների ժամանակ կանխել բռնությունները՝ անմիջական շփման, վստահության ստեղծման և բաց հաղորդակցության միջոցով: Այս մոդելը կիրառվել է մի շարք մասշտաբային բողոքի ակցիաների ժամանակ՝ ներառյալ իսլամաֆոբ քարոզչության դեմ շարժումները և աշխատավորների հանրահավաքները: Բանակցող ոստիկանները հազնում են քաղաքացիական հագուստ, հանդես են գալիս որպես միջնորդներ՝ հանրային կազմակերպիչների ու ուժային կառույցների միջև: Արդյունքում, բռնության մակարդակն այս հավաքների ժամանակ զգալիորեն նվազել է: Նիդեռլանդներում գործում են բանակցային արձագանքման հատուկ խմբեր՝ **GRO Teams (Gebiedsgebonden Recherche Ondersteuning)**, որոնք համակարգված կերպով շփվում են բողոքի կազմակերպիչների և մասնակիցների հետ՝ նախքան միջոցառման անցկացումը և դրա ընթացքում: Նրանց առաջնային նպատակը խաղաղ գործողությունների շարունակականության ապահովումն է՝ առանց ուժի կիրառման անհրաժեշտության: Նման մոտեցումը կիրառվել է նաև մեծածավալ միջազգային միջոցառումների ժամանակ, օրինակ՝ ԵՄ զագաթնաժողովների ժամանակ ընդդիմադիր շարժումների կառավարումն իրականացնելու համար՝ առանց զանգվածային բռնկումների: Շվեդիայի մոդելը ևս կարող է կիրառվել Հայաստանում: Շվեդական ոստիկանությունը մեծ ջանքեր է թափում՝ կանխելու հանցագործությունները մինչ դրանք տեղի ունենալը: Դա ներառում է համապարփակ հետազոտություններ, տվյալների վերլուծություն և ռիսկի

խմբերի բացահայտում: Ոստիկանները պարբերաբար անցնում են վերապատրաստում մարդու իրավունքների, քաղաքացիական ազատությունների և մարդու արժեքների մասին, որպեսզի իրենց գործողություններում ապահովեն իրավական սահմանների և հանդուրժողականության պահպանում: Համայնքային ոստիկանների դերակատարությունն այստեղ կենտրոնացած է բնակչության հետ անմիջական շփման, վստահության կառուցման և խնդիրների վաղ հայտնաբերման վրա: Ոստիկանությունը գործում է բարձր թափանցիկությամբ, որտեղ հասարակությունը հնարավորություն ունի հետևել նրանց աշխատանքին և մասնակցություն ունենալ գնահատման գործընթացներին: Հայաստանում համայնքային ոստիկանությունը դեռ զարգացման փուլում է, ուստի շվեդական փորձը կարող է շատ օգտակար լինել վստահության կառուցման և հանցավորության կանխարգելման արդյունավետ մեթոդների ներդրման համար, ինչպես նաև Շվեդիայի նման համակարգային թափանցիկության ներդրումը կարող է բարելավել ոստիկանության նկատմամբ հանրային վստահությունը:

Միջազգային փորձի համեմատական ուսումնասիրությունը վկայում է, որ ոստիկանության արդյունավետ մոդելը պետք է հիմնված լինի՝ հասարակության հետ վստահելի կապի, իրավունքի գերակայության, կանխարգելման մեխանիզմների, մարդու իրավունքների հարգման վրա, այլ ոչ թե հակառակորդի հետ առնակատման, այլ հասարակության գործընկեր լինելու՝ նպաստելով հանրային խաղաղության և սահմանադրական կայունության պահպանմանը:

Հայաստանում քաղաքացիական անհնազանդությունը հաճախ ուղեկցվում է բարձր լարվածությամբ, ինչը կարող է հանգեցնել բռնության և հասարակական կարգի խախտման: Այսպիսի իրավիճակներում ոստիկանության դերը ոչ միայն իրավակարգի պահպանման, այլև հանրային վստահության ստեղծման հարց է, ինչը հատկապես կարևոր է ժողովրդավարական հասարակություններում, որտեղ քաղաքացիների իրավունքները և ազատությունները բարձր են գնահատվում: Այստեղ բանակցային մոդելի ներդրումը կարող է լինել արդյունավետ միջոց՝ նվազեցնելու հանրային բախումները և ապահովելու սահմանադրական կարգի պահպանությունը:

Այդ նպատակով անհրաժեշտ է ժամանակին իրականացնել կրթական ու օժանդակ ծրագրեր ոստիկանների համար՝ բարելավելու նրանց քաղաքացիական նախաձեռնությունների և բողոքների նկատմամբ ընկալումը:

Բանակցային ոստիկանության մոդելի արդյունավետությունը պայմանավորված է հասարակական կազմակերպությունների, նախաձեռնությունների և քաղաքական միավորների հետ պարբերական կապի հաստատմամբ: Այս համակարգը կարող է զարգանալ միայն այն դեպքում, երբ իշխանությունները պատրաստ կլինեն համագործակցել քաղաքացիական հասարակության հետ և հաշվի կառնեն նրանց

կարծիքները, պահանջները: Բանակցային խմբերի կազմը պետք է լինեն բազմազան, որտեղ ներկայացված են ոչ միայն ոստիկանները, այլև անկախ իրավապաշտպանները և քաղաքացիական ակտիվիստները՝ համատեղ աշխատանքում ունենալով հավասար դերակատարություն: Նման մոդելի ներդրումը պահանջում է ոստիկանության անձնակազմի հատուկ պատրաստվածություն՝ ոչ միայն զանգվածային միջոցառումների անվտանգությունն ապահովելու, այլև հակասություններն արդյունավետ կերպով լուծելու համար: Պատրաստականությամբ պետք է ներառի բանակցություններ վարելու, առնակատումների կառավարման, սոցիալական և մշակութային խտությունների վերաբերյալ կրթություն, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում խաղաղություն պահպանելու ռազմավարություններ: Բանակցային մոդելը հնարավորություն կտա՝

1. Ապահովել ավելի քիչ բռնության կիրառություն

Նվազեցնելու ուժի կիրառումը, որը կարող է հանգեցնել արյունահեղության: Ոստիկանության գործառնությունները վերածվում են ոչ թե հակառակորդին «մարելու», այլ «կառավարելու»՝ որպես իրավական կարգի պահպանմանն աջակցող գործիք: Սա նաև նպաստելու է ոստիկանության լեգիտիմության բարձրացմանը:

2. Բարելավել միջազգային համբավը

Հայաստանի արտաքին քաղաքականության տեսանկյունից, ժողովրդավարության բարձր չափանիշների և մարդու իրավունքների պաշտպանության կապակցությամբ այս մոտեցման ներդրումը կարող է նպաստել երկրի միջազգային պատկերի բարելավմանը: Շարժումների խաղաղ կազմակերպումը և դրանց ընթացքում բռնության նվազումը կարող են դրականորեն անդրադառնալ երկրի իրավապահ համակարգի միջազգային վարկանիշի վրա:

3. Տարբեր ինստիտուտների համագործակցություն

Հնարավոր է ստեղծել համագործակցության մոդել, որտեղ ոստիկանությունը, քաղաքացիական հասարակությունը և տեղական ինքնակառավարման մարմինները կգործեն միասին՝ ժողովրդավարության սկզբունքների հիման վրա, որոնք չեն խախտում քաղաքացիների իրավունքները:

Ոստիկանության լեգիտիմությունն ուղղակիորեն կախված է նրա չեզոքությունից. երբ հասարակությունը վստահ չէ, որ ոստիկանությունն անկախ է քաղաքական ուժերից կամ գործում է որոշակի կուսակցական շահերից ելնելով, ինստիտուցիոնալ վստահությունը քայքայվում է: Հետևաբար ոստիկանության վերակազմավորման և պրոֆեսիոնալացման գործընթացներում առաջնային դեր պետք է ունենա քաղաքական չեզոքության ապահովման մեխանիզմների զարգացումը:

Ոստիկանության կողմից ցանկացած միջամտություն, օրինակ՝ հավաքների ցրում, ձերբակալություններ, սահմանափակումներ, պետք է ունենա իրավական հիմք, բխի

օրինական նպատակից (օր.՝ հասարակական կարգի պահպանություն) և լինի նվազագույն միջամտություն՝ հիմնված անհրաժեշտության և համաչափության սկզբունքների վրա: Այս սկզբունքները արտացոլված են Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, օրինակ՝ Oya Ataman v. Turkey գործում, որտեղ դատարանը հստակ նշեց, որ պետությունը պարտավոր է հանդուրժել որոշակի սոցիալական անհարմարություն խաղաղ հավաքների ընթացքում: (European Court of Human Rights. (2006). Oya Ataman v. Turkey, Application no. 74552/01, Judgment of 5 December 2006.)

Ոստիկանության գործունեությունը զանգվածային միջոցառումների ընթացքում պետք է խստորեն համահունչ լինի «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներին, որոնք երաշխավորում են քաղաքացու իրավունքը՝ ազատորեն և խաղաղ կերպով մասնակցելու հանրային հավաքներին: Օրենքով սահմանված սկզբունքներից է՝ հավաքների նկատմամբ **պետության չեզոքության պարտականությունը**, ինչպես նաև **հավաքների ապահովման և ոչ թե խափանման** պարտավորությունը, ինչը պարտադրում է ոստիկանությանը գործել զուսպ, անաչառ և բացառապես օրենքի շրջանակներում՝ միաժամանակ զերծ մնալով հավաքի մասնակիցների նկատմամբ անհամաչափ ուժ կիրառելուց կամ քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված միջամտություններից: («Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենք, 2011):

Ոստիկանության արձագանքը խաղաղ ցույցերին պետք է առաջնորդվի միջազգային մարդասիրական և մարդու իրավունքների նորմերով, որոնք պարտադրում են ցուցարարների նկատմամբ կիրառել բացառապես **զսպվածություն և համաչափ ուժ**: Human Rights Watch-ի 2021 թվականի գեկույցը մատնանշում է, որ բազմաթիվ երկրներում ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառումներն ու բռնությունները հանգեցրել են մարդու իրավունքների խախտումների, ինչը ընդգծում է ՀՀ ոստիկանության՝ ցուցարարների իրավունքներն ու հավաքների ազատությունը պաշտպանելու անհրաժեշտությունը՝ ըստ միջազգային ստանդարտների (Human Rights Watch, 2021):

Ըստ էության, ոստիկանությունը հանդիսանում է սահմանադրական կարգի պահպանման և քաղաքական կայունության կարևոր երաշխավորը, որի հիմնական գործառնությունը հասարակական կարգի ապահովումն է՝ հատկապես քաղաքացիական անհնազանդության և այլ հասարակական մարտահրավերների ժամանակ: Իրականացման ընթացքում ոստիկանությունը պետք է առաջնորդվի օրենքի գերակայությամբ, հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ պահպանելով գործառնական համաչափության և քաղաքական չեզոքության սկզբունքները: Այս միտումները պահանջում են ոստիկանության ինստիտուցիոնալ կորպորատիվ մշակույթի զարգացում, մասնագիտական հմտությունների բարձրացում և միջազգային լավագույն փորձի արդյունավետ կիրառություն: Միաժամանակ, անհրաժեշտ է ապահովել ոստիկանության

նկատմամբ հասարակական վստահության բարձր մակարդակ՝ ինչը կախված է նրա գործունեության թափանցիկությունից և հաշվետվողականությունից: Այս համատեքստում ուստիկանության դերն ընդգծվում է ոչ միայն որպես ուժային կառույց, այլ նաև որպես ժողովրդավարական հասարակության պահպանման կարևոր ինստիտուտ, որն անհրաժեշտ է զարգացնել և հզորացնել ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական անհնազանդության երևույթը, որպես ժողովրդավարական հասարակության ինքնաարտահայտման և սոցիալ-քաղաքական ազդեցության գործիք, բնույթով պարադոքսալ է. այն միաժամանակ հանդիսանում է սահմանադրական կարգի սահմաններում գործող իրավունքի իրացման ձև և որոշ պարագայում այդ նույն սահմանադրական կարգի նկատմամբ մարտահրավեր: Հայաստանի պատմական և քաղաքական զարգացումների վերլուծությունը ցույց է տալիս, որ նման իրավիճակներում ուստիկանության դերը դառնում է վճռորոշ ինչպես սահմանադրականության պահպանման, այնպես էլ մարդու հիմնարար ազատությունների պաշտպանման տեսանկյունից:

Ուստիկանության միջամտության լեգիտիմությունը պայմանավորված է ոչ միայն իրավական դրույթներով, այլև քաղաքական չեզոքությամբ, համաչափության սկզբունքով և հանրային վստահության ապահովմամբ: Անցյալի դեպքերը՝ մասնավորապես 2008, 2015, 2016 և 2018 թվականների քաղաքացիական բողոքները, բացահայտել են ինչպես ուստիկանության ինստիտուցիոնալ թերությունները, այնպես էլ իշխանական միջամտության ռիսկերը իրավապահ համակարգի որոշումներում: Դրա հետևանքով հաճախ խաթարվել է հանրության վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ՝ թուլացնելով սահմանադրական կայունությունը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ուստիկանության առավել արդյունավետ և հասարակության համար ընդունելի արձագանքի համար կարևոր է կիրառել կանխարգելման, համագործակցության և հաղորդակցության մոդելներ: Նորվեգիայի, Նիդեռլանդների և Շվեդիայի օրինակները փաստում են, որ խաղաղ հավաքների ժամանակ ուստիկանության և քաղաքացիների միջև վստահության վրա հիմնված հարաբերությունների ձևավորումը նվազեցնում է հակամարտության էսկալացիայի ռիսկը: Հայաստանի պարագայում անհրաժեշտ է անցում կատարել ուժի կիրառման վրա հիմնված մոտեցումներից դեպի ինստիտուցիոնալ պրոֆեսիոնալիզացիայի և համայնքային համագործակցության մոդելի: Դրա համար հարկավոր է՝

- ուստիկանական համակարգի դե-պոլիտիզացիա,
- մարդու իրավունքների հարցերով մասնագիտական վերապատրաստման համակարգային ներդրում,

- անկախ վերահսկողության մեխանիզմների ամրապնդում,
- քաղաքացիական հասարակության հետ շարունակական երկխոսություն:

Այսօր Հայաստանի համար առաջնահերթ է ոչ միայն սահմանադրական կարգի պահպանման իրավական հիմքերի ամրապնդումը, այլև այդ գործառույթն իրականացնող ինստիտուցիաների լեգիտիմության և հանրային վստահության բարձրացումը: Միայն այդ պարագայում հնարավոր կլինի ձևավորել կայուն ժողովրդավարական համակարգ, որտեղ ուստիկանը հանդես կգա ոչ թե որպես ճնշման գործիք, այլ՝ սահմանադրական կարգի պահպանության իրական երաշխիք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Ազգային ժողով. (2011). «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենք. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67136> (17.05.2025).
- ՀՀ Սահմանադրություն. (2015). <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510> (17.05.2025).
- Dalton D. (1993). *Mahatma Gandhi: Nonviolent power in action*. Columbia University Press. <https://www.asianstudies.org/wp-content/uploads/mahatma-gandhi-nonviolent-power-in-action.pdf> (15.05.2025).
- European Court of Human Rights. (2006). *Oya Ataman v. Turkey*, Application no. 74552/01. [https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:\[%22001-78330%22\]}](https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-78330%22]}) (17.05.2025).
